

ՆԱԽԱԳԱՅ ԲՈՂԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ  
ՌՈՒՄՈՅՑ ՍԱՀՄԱՆԱՊԱՅ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՊԵՏԸ

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան երէկ ընդունեց Հայաստանի մէջ Ռուսիոյ սահմանապահ ծառայութեան նոր պետ Վորապետ Ապոլինովը, որուն կ'ընկերակցէր Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Անատոլի Տրիքովը:

Ներկայացնելով նոր հրամանատարը, դեսպան Տրիքովը ըսաւ, որ Վոր. Ապոլինովը Յունիս 1999էն ի վեր կը ծառայէ Հայաստանի մէջ իբրեւ Հայաստանի սահմանապահ ուժերու սպայակոյտի պետ:

Իր կարգին, նախագահ Քոչարեան վստահութիւն յայտնեց, որ Վոր. Ապոլինովի պաշտօնավարութեան ընթացքին պիտի պահուին ստեղծուած աստիճանաբար ինտեգրացիոն եւ հաշտութեան գործակցութիւնը պիտի շարունակէ յաջողութեամբ պարգանալ:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

ՆԱԽԱԳԱՅ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՅՈՒՏԻ  
ԳԼԽԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ

## ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԳԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԸՆԹԱՅԻԿ ԺՈՂՈՎԸ

Նախարարաց խորհուրդը երէկ երեկոյեան ժամը 5:00ին գումարեց իր ընթացիկ բայց երկար ժողովը (5 ժամ). Թանգարանի իր կեդրոնատեղիին մէջ. գլխաւորութեամբ նախագահ Վոր. Էմիլ Լաիուտի: Ներկայ էր կառավարութեան կազմը. գլխաւորութեամբ վարչապետ Հարիրի: Բացակայ էին նախարարներ Մահմուտ Համուտ, Նեմիլ Միքաթի եւ Ղասսան Սալամէ:

Ժողովը քննարկեց 36 կետերէ բաղկացած օրակարգ մը. ապա լայնօրէն անդրադարձաւ Ամմանի մէջ գումարուած արաբական 13րդ վեհաժողովին արդիւնքներուն: Այս գծով ժողովը գոհունակութիւն յայտնեց, որ յաջորդ վեհաժողովը որոշուած է գումարել Պէյրութի մէջ (2001 Մարտ), ինչպէս նաեւ ուրախութեամբ ընկալեց արաբական երկիրներուն արտայայտած վարակցութիւնը՝ Լիբանանի:

Ժողովը երկարօրէն քննարկեց նաեւ լիբանանեան քաղաքական բեմին վերջին իրադարձութիւնները:

## ԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՀԱԺՈՂՈՎԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԷՆ ՔԻՉԵՐ ԳՈՂ ԵՆ

Ամմանի արաբական վեհաժողովին արդիւնքներէն քիչեր գոհ են: Միջին Արեւելքի մէջ, կարգ մը երկիրներու մամուլն ու լրատուական աղբիւրները քննադատեցին իրենց զեկավարները, որոնք չէին յաջողած իրաքի գծով համաձայնիլ, ինչպէս նաեւ՝ Իսրայէլի դէմ աւելի խիստ կեցուածք որդեգրել:

Միայն սուրիական մամուլն է, որ ողջունեց Ամմանի վեհաժողովին յաջողութիւնը, գալն նկատելով կարեւոր քայլ մը արաբական միացեալ ճակատի մը կազմութեան ճամբուն վրայ:

Եգիպտական ու յորդանանեան օրաթերթերը դրական նկատեցին վեհաժողովին արդիւնքները, ընդունելով սակայն, որ թերութիւններ արձանագրուած են:

Արաբ մեկնաբաններ զիտել տուին, որ Ամմանի վեհաժողովին յաջողութեան զուգարեւած է Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն: Լիբանանեան «Մաֆիթ» օրաթերթի խմբագրապետ Թալալ Սալամն կը գրէր, որ այնքան ատեն որ արաբները տարակարծիք կը մնան եւ չեն կրնար համաձայնութիւն մը գոյացնել Իրաք - Քուէյթ հարցին եւ պատժամիջոցները ջնջելու մասին, Շարոն պիտի մնայ թիւ մէկ յաջողականը:

Արաբական Միացեալ Էմիրութիւններու «Խալիժ» օրաթերթը իր կարգին հաղորդեց, որ վեհաժողովը գոհացում քուտուա արաբ ժողովուրդին փափաքներուն եւ ոչ այլ յաջողեցաւ յստակ ռազմավարութիւն մը ճշդել Շարոնի դէմ:

Սուրիական «Թըրքի» պաշտօնաթերթը սակայն անկրկնադարձ մը նկատեց Ամմանի հանդիպումը, յատկապէս պաղեստինեան ինթիֆա տալիս հանդէպ արտասայտուած գորակցութեան իմաստով:

Ամմանի վեհաժողովի արդիւնքէն զգոհ է նաեւ Իսրայէլ, որ ըսաւ, թէ որոշումները խոչընդոտներ են խաղաղութեան դիմաց: Արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս ըսաւ, որ վեհաժողովին որոշումները կողմնակալ են եւ կրնան վատթարացնել կացութիւնը: «Հասարակ» օրաթերթը իր կարգին քննադատեց վեհաժողովին ու անոր արդիւնքները, զիտել տալով, որ արաբները դէպի ետ քայլեցին յատկապէս ծայրայեղական ու արմատական տեսակէտներու վերադառնալով: «Հասարակ» անընդունելի նկատեց Սուրիոյ նախագահ Պաշար Ասաւի խօսքը, ուր ան իսրայէլացիները նմանցուց նացիներուն:

Շար.ը՝ էջ 10

## ԹՈՒՐԿԻԱ ՈՐԵԻԷՆ ՏԱՐԱԾՔ ԶՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՏԱԼՈՒ

Կ'ԸՍԵ ՄԵՍՐՈՊ Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Թուրք - ամերիկեան միութիւններու համագումարը կը հաղորդէ, որ Պոլսոյ Հայոց Մեարոպ Բ. պատրիարքը կիրակի օրը ըսած է, թէ Թուրքիա որեւէ տարածք չունի Հայաստանին տալով: Մեարոպ Բ. ըսած է նաեւ, որ հայ պաշտօնատարներու կողմէ հողային պահանջատիրութիւնը խուճապ է ինչպէս որ գաղափարն է:

Պատրիարքը խօսած է Կեսարիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ մատուցուած պատարագէն ետք:

ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ  
ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

## ԻՆԹԻՖԱՏԱՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ Կ'ԸՍԵ ԱՐԱՅԱՆ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ երէկ հաստատեց, որ ինթիֆա տան պիտի շարունակուի եւ թէ իսրայէլեան ուժերու դէմ չ'ապստամբ պիտի չղաղան, որ պաղեստինցիները տեղի տան ու վար առնեն զենքերը: Արաֆատ ըսաւ նաեւ, որ իսրայէլեան ուժերու դէմ պաղեստինեան ուժերուն ընտրանին նկատուող գործադուլն կեդրոնատեղիին ցոյց կու տայ, որ պաղեստինցիներուն դէմ հարիւրօրեայ արշաւի մը ձեռնարկուած է:

Չորեքշաբթի երեկոյեան Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն հրահանգած էր ուժերու դէմ Արաֆատի ուժերուն գործադուլներուն, որոնք կազմակերպուած էին Ռամադայի մէջ կը գտնուէին: Իսրայէլեան բանակի ռազմաթիւնները ուժերուն ու հրթիռներուն տարափի մը տակ առին յիշեալ կեդրոնները: Իսրայէլ յայտարարեց, որ պաղեստինեան ապստամբութեան ուժերը թիրաք վարձուցած է՝ զգուշացնելու համար արմատական շարժումներու գին:



Պատահիները եւս կը մասնակցին ինթիֆատային:

եայները, որոնք ուժերու դէմ ու անձնասպանական գործողութիւններու բարձրաստիճան պաշտօնատարները զատապարտեցին Չորեքշաբթի գիշերուան յարձակումը, որ քանի մը գոհ եւ տասնեակ մը վիրակտորներ պատճառեց: Ականատեսներ ըսին, որ իսրայէլեան ռազմաթիւններուն շարունակէ ուժերու դէմ: Իսկ արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս յայտնեց, որ ուժերու դէմ պիտի չ'ապստամբուի, եթէ պաղեստինցիները վերջ տան վեցամսեայ ըմբոստու-

թեան: Արաֆատի խորհրդատուներն ու պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարները զատապարտեցին Չորեքշաբթի գիշերուան յարձակումը, որ քանի մը գոհ եւ տասնեակ մը վիրակտորներ պատճառեց: Ականատեսներ ըսին, որ իսրայէլեան ռազմաթիւններուն շարունակէ ուժերու դէմ: Իսկ արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս յայտնեց, որ ուժերու դէմ պիտի չ'ապստամբուի, եթէ պաղեստինցիները վերջ տան վեցամսեայ ըմբոստու-

Շար.ը՝ էջ 10

ԸՍՏ «ԵՆԻ ԱՐՊԵՅԱՆ» ԹԵՐԹԻՆ

## ՔԻ ՈՒԷՍԹԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ՊԻՏԻ ՏԱՐԲԵՐԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԷՆ

Արաբական կապերու վատթարացումը 4.- Միւս խմբակի եւ համանախագահ երկիրներու ոչ գործօն ըլլալու իբրեւ արդիւնք Արաբական մէջ ստեղծուած պատերազմական շղագարութիւնը:

5.- Արեւմուտքի (Մ. Նահանգներ) դէմ Ռուսիոյ ցուցական կեցուածքը (ռուս - իրանական բանակցութիւններու արդիւնք եւ այլն):

6.- Պալեստինեան տագնապի վերակուտումը (Մակեդոնիոյ դէպքեր):

7.- Լեռնային Ղարաբաղի հարցին մէջ Թուրքիոյ շահագրգռութեան բարձրացում եւ Արաբիայի միջնորդութեան արդիւնքները:

Քի Ուէսթի միջեւ պիտի տարաբանուի իր արաբական կապերու վատթարացումը 4.- Միւս խմբակի եւ համանախագահ երկիրներու ոչ գործօն ըլլալու իբրեւ արդիւնք Արաբական մէջ ստեղծուած պատերազմական շղագարութիւնը:

5.- Արեւմուտքի (Մ. Նահանգներ) դէմ Ռուսիոյ ցուցական կեցուածքը (ռուս - իրանական բանակցութիւններու արդիւնք եւ այլն):

6.- Պալեստինեան տագնապի վերակուտումը (Մակեդոնիոյ դէպքեր):

7.- Լեռնային Ղարաբաղի հարցին մէջ Թուրքիոյ շահագրգռութեան բարձրացում եւ Արաբիայի միջնորդութեան արդիւնքները:

## ՍԱՄՈՒԷԼ ԲԱՐԱՅԱՆԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ ԿԸ ՄՆԱՅ ԱՆՓՈՓՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, 29 (ԱՐՄԷՆՓՐԵՍ) - Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն դատարանի քրէական հարցերու մարմինը անփոփոխ պահեց ԼՂՀի Գերագոյն դատարանին կողմէ 26 փետրուարին «Սամուէլ Բարայեան եւ միւսներ» քրէական գործին վերաբերեալ դատավճիռը:

Ս. Բարայեանի պաշտպան փաստաբան Ժուտէֆ Ծաքարեան ըսաւ, որ կանխատեսելի էր այսպիսի որոշումը: Պաշտպան փաստաբանները բողոքի դիմում կատարած են գոտ օրէնքի տուր պահպանելու եւ երկրի դատական համակարգի բոլոր տեսանկրկներուն զիջելու կարելիութիւնը օգտագործելու համար, ըսաւ ան: Ծաքարեան նշեց, որ նախապատրաստական աշխատանքներ կը տարուին դիմելու համար Պարագպուրի մարդու իրաւունքներու երոպական դատարանին:

Նշենք, որ ըստ դատավճիռին՝ Ս. Բարայեան, Սասուն Աղաջանեան եւ Լեռն Միլիգոյեան դատապարտուած էին 13, 5, ֆարապեան՝ 13, Գ. Ծաքարեան՝ 7 տարուան բանտարկութեան: Ինք այլ մեղադրանքներ չ'ունեն որոշուած էին 3էն 6 տարի պայմանական բանտարկութեան եւ ազատ արձակուած դատարանի դահլիճէն:

## ՌՈՒՄՈՅՑ ՀԱՄԱՅՆԱԿԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿԱԿԱՐ ԿԵՆՍՏԻ ԶԻՈՒԿԱՆՈՎ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՆԱԽԱԳԱՅ ԲՈՂԱՐԵԱՆԻ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԵՏ



Զիուկանով Բոչարեանի մօտ:

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ Համայնավար Կուսակցութեան ղեկավար Կենստի Զիուկանովը, որ Երեւան կը գտնուի Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Համագումարին մասնակցելու համար:

Հանդիպումին արձարձեցան պետութիւն - կուսակցութիւններ յարաբերութիւններուն առնչուող հարցեր: Անոնք նաեւ անդրադարձան Հայկուսակցական գործակցութեան հեռանկարներուն եւ կարեւոր նկատեցին առեւտրական - տնտեսական յարաբերութիւններու աշխուժացումը:

Կ. Զիուկանով երէկ հանդիպում ունեցաւ նաեւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Ուշաշուրեանի հետ:

Հանդիպումին քննարկուեցան միջխորհրդարանական գործակցութեան առնչուող հարցեր: Անոնք պատրաստակամութիւն յայտնեցին խորհրդարանական կազմակերպութիւններու, մասնաւորաբար ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովին մէջ գործակցութեան վերաբերեալ:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԵՏ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան Յունաստան այցելութեան շրջագիծին մէջ Երեքշաբթի օր հանդիպում ունեցաւ Յունաստանի նախագահ Քոնսթանթինոս Սթեֆանոպուլոսի հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Հայ - յունական զինուորական - քաղաքական գործակցութեան, շրջանային պահպանութեան եւ զինուորական - քաղաքական իրավիճակին առնչուող հարցերը:

Չորեքշաբթի օր նախարար Սարգսեան հանդիպումներ ունեցաւ Յունաստանի պաշտպանութեան նախարար Աթիս Յոնաստոպուլոսի եւ բանակի սպայակոյտի պետ Փարաիտաքիսի հետ: Հանդիպումներուն քննարկուեցան զինուորական - ուսումնասիրական եւ խաղաղարար միաւորակցութեան ստեղծման ուղղութեամբ երկու երկիրներու պաշտպանութեան նախարարութիւններու միջեւ գործակցութեան ընդլայնման կարելիութիւնները եւ միացեալ ծրագրերու իրագործման առնչուող հարցեր: Քննարկուեցան կողմերու դիրքորոշումները զինուորական գործակցութեան հարցերու նկատմամբ:

Շար.ը՝ էջ 10

## ՔԻ ՈՒԷՍԹԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ ԳԾՈՎ ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՄԵՐԺԷ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան «Սեւրք» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ միայն Հայաստանի եւ Արաբիայի նախագահներու միջեւ Յորդիտայի մէջ նախատեսուած հանդիպումին ետք կարելի է խօսիլ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման հեռանկարներու եւ Սոսուկանի մէջ Քոչարեան - Ալիեւ բանակցութիւններու շարունակման յարմարութեան մասին:

Նախարար Օսկանեան մերժեց կանխատեսումներ կատարել Քի Ուէսթի հանդիպումի արդիւնքներուն մասին: «Կրնայ ըլլալ, որ մենք յաւ արդիւնքներու յանգինք, կրնայ ըլլալ, որ երկխօսութիւնը շարունակուի Սակայն դժուար է խօսիլ հանդիպումի արդիւնքներուն մասին», ըսաւ ան:

Նախարար Օսկանեան դրական գնահատեց Միացեալ Նահանգներ իր վերջին այցելութեան արդիւնքները: Նախարար Օսկանեանի համաձայն՝ այցելութեան ընթացքին տեղի ունեցած հանդիպումներուն տեսակէտներու օգտակար փոխանակում կատարուած է Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման եւ Հայ-ամերիկեան յարաբերութիւններու գարգացման հեռանկարներու մասին:



### ԷՃԵԻՏ ԿԸ ՀԵՐՔԷ

ԱՆԳԱՐԱ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)։- Թուրքիոյ վարչապետ Պիլիքի ԷՃԵԻՏ Հինգշաբթի օր հերքած է, թէ կառավարական ընկերակցութիւնը բաւարարուծ չունի տնտեսական բարեկարգումները գործադրել տալու համար եւ թէ անկիս ի վերջոյ կրնայ պարտադրուած ըլլալ դիւանակալներու կառավարութեան մը տեղ տալու:

Մեկնաբաններ վզուշացուցած են, թէ ընկերակցութեան շարքերուն մէջ քաղաքական ճակատումներ կրնան արգելակել կառավարութեան բանալի օրինագիծներու վաւերացումին ապահովումը:

Թուրքիա յայտնած է, թէ կը ծրագրէ տնտեսական նոր ծրագիրի մը մշակումը վերջնականացնել մինչեւ Ապրիլի վերջերը: Երկրին տնտեսութեան նոր նախարարը՝ Քեմալ Տերվիշ, խօսած է 10էն 12 միլիար տոլար նոր փոխառութիւններ ապահովելու կարելիութեան մասին՝ միջազգային կազմակերպութիւններէ եւ կառավարութիւններէ, այդ ծրագիրին իրեն վորակցութիւն:

Սակայն փոխառու հաւանական կազմակերպութիւնները կ'ուզեն շոշափելի կերպով բարեկարգումներու գործադրութիւնը տեսնել՝ նախքան որեւէ գումար խոստանալը:

Եթէ Թուրքիա արմատական բարեկարգումներու ծրագիրը չգործադրէ եւ մինչեւ Ապրիլի վերջ նոր փոխառութիւններ չներգրաւէ, կարգ մը մեկնաբաններ կ'ըսեն, թէ կառավարութիւնը կրնայ տապալել եւ փոխարինուիլ դիւանակալներու կառավարութեամբ մը՝ նախագահին առաջնորդութեամբ:

ԷՃԵԻՏ ողջունած է Առաքինութիւն Կուսակցութեան վորակցութեան յայտարարութիւնը:

Ընդդիմադիր խլամական Առաքինութիւն Կուսակցութիւնը Հինգշաբթի օր յայտնած է, թէ վորավիզ պիտի կանգնի կառավարութեան լաւաշիկայ 2 շաբաթներու ճիգերուն՝ ելեւտական մարզին մէջ շտապ կերպով օրինագիծներ վաւերացնել տալու համար:

Թուրքիա պէտք է ձեռնարկէ շաբթ մը բարեկարգումներու՝ արտասահմանէն նիւթական օժանդակութիւն ապահովելու համար: Ասիկա կենսական կը նկատուի երկիրը տնտեսական 2 շաբթուան տագնապէն դուրս բերելու համար:

Առաքինութեան բարձրաստիճան երեսփոխան Պիլիքի Արինչ մասնաւոր առաջնորդ մը ընթացքին յայտնած է, որ եթէ 15 օրինագիծներու վաւերացումը անհրաժեշտ է երկիրը իր տագնապէն դուրս բերելու համար, «անոր վորավիզ պիտի կանգնին»:

ԸՍՏ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ

### ՂԱԶԱԽՍՏԱՆԷՆ ՆՈՎՈՐՈՍԻՍԸ ԶԱՐԻՒՂԱՏԱՐԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՎՈՍՓՈՐԻ ՆԵՂՈՒՅԸ ԿՐՆԱՅ ԽՃՈՂՈՒԻԼ

ԼՈՆՏՈՆ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ամերիկեան «Փորն Էնտ Փարթնըր» ընկերութիւնը վզուշացուցած է, թէ Ղազախստանէն Նովորոսիսք նոր բացուած քարիղատար խողովակը 17էն 28 միլիոն տակաւոն քարիղատար նաւերու կարիքը պիտի ունենայ, անոր քարիղղ փոխադրելու համար, աւելի եւս խճողելով Վոսփորի ծովային բանուկ սանցքը:

Ըստ ընկերութեան նախատեսութիւններուն, խողովակին կարողականութիւնը օրական 560 հազար տակաւոնով պիտի սկսի եւ ի վերջոյ օրական 1,34 միլիոն տակաւոնով պիտի հասնի:

Այս նախատեսութիւնները կը հրապարակուէին այն շաբաթը, երբ Թուրքիոյ ծովային նաւարկութեան պատասխանատու նախարարը՝ Ռամալան Միրալաօղլու, կը յայտարարէր, թէ պետութիւնը քննութիւն պիտի տանի Վոսփորի վրայ քարիղատար նաւերու յաւելեալ երթուէկին ապահովութեան գծով պատճառած վտանգին մասին:

Չորեքշաբթի օր, ան մասնաւոր առաջնորդ մը ընթացքին յայտնած էր, թէ թրքական նեղուցները արդէն իսկ առաւելագոյն երթուէկը կը հայթայթեն: «Երբ անոնք սկսին նաւերով Ղազախստան քարիղղ փոխադրել, մեր նեղուցներուն վրայ երթուէկը անելի պիտի մատնուի», ըսած է Միրալաօղլու:

«Փորն» յայտնած է, թէ քարիղատար անհրաժեշտ նաւերու թիւը կախեալ պիտի ըլլայ այն վայրէն, ուր քարիղղ իր շուկան պիտի գտնէ:

Թուրքիա եւ անոր սերտ դաշնակիցը՝ Մ. Նահանգներ, կասպեան քարիղղի փոխադրութեան համար կը քաջալերեն Պաքու - Ճէյխան ճանապարհը:

### ՓՈՒԹԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՇԵՏ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Հինգշաբթի օր պաշտպանութեան նոր նախարարին եւ սպայակոյտի պետին հետ ժողով մը գումարած է՝ քննարկելու համար գլխուղարկեան բարեկարգումներու ծրագիրին գործադրութեան միջոցները:

Նախագահ, պաշտպանութեան նախարար Սերգեյ Իվանով խոստացած էր ձեռնարկել բարեկարգումներու, որոնց կարգին՝ պարտադիր զինուորագրումի վերջ տալու քայլը: Սակայն ան յայտնած էր, թէ պիտի չաճապարհէ:

«Ազգային ապահովութիւնը մարդ մը չէ, ուր յեղափոխութիւնները ընդունելի են», յայտնած է Իվանովը:

Կրեմլին ըսած է, թէ Փութին աշխատանքային նիստ մը ունեցած է Իվանովի եւ զօրավար Անատոլի Քվաշնինի հետ, որ յաճախ բարձր ունեցած է նախկին նախարարին՝ Իկոր Սերկէեւի հետ, ռազմավարութեան եւ զինեալ ուժերու բարեփոխումին հարցով:

Անկախ ուժերու կրճատումէն եւ զինական սարքերու ալիքի կանաչումէն, զինեալ ուժերու նոր ճիւղի մը հաստատումը պիտի ըլլայ Քվաշնինի հրամանատարութեամբ:

Ռուսական Անըզպետային Ուժերը, որոնք Յունիստի պիտի ըստնուին Ռազմավարական Հրթիռներու Ուժերէն, լրտեսական արձանակներ պիտի արձակեն:

Յստակ չէ, թէ այդ ուժերը ինչպիսի ալ աշխատանքներ պիտի ունենան, սակայն անոնց առնձրինն

զոյւթիւնը խորհրդանշական արժէք պիտի ունենայ, նկատի ունենալով զազգային հրթիռային պաշտպանութեան ամերիկեան ծրագրին ներքին անհրաժեշտութեան հանդէպ Ռուսիոյ ընդդիմութիւնը:

Իվանով, որ Փութինի ամէնէն վստահելի զանակիցն է, ուժերը կերպով կ'ընդդիմանայ նշեալ ծրագրներուն, սակայն ան նուազ հաւանականութիւն ունի քան Սերկէեւի Քվաշնինի հետ բարեկարգումը:

#### «ԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՄ», ԿԸՄԷ ԻՎԱՆՈՎ

«Իվանովի այս պաշտօնին նշանակումը ցուցանիչ է Փութինի առաջադրութեան, քաղաքական լուրջ գորակցութիւն հայթայթելու իր առաջարկած գլխուղարկեան բարեկարգումներուն», ըսած է մեկնաբան մը Հինգշաբթի օր:

Իվանով նման գաղափար մը արտայայտած է:

«Զինեալ ուժերուն մէջ ամէն մարդ մէկ հրամանատարութեան ներքեւ պիտի ըլլայ», ըսած է ան ռուսական պատկերասփռուէն:

Արտասովոր յօդուածի մը մէջ, «Ինթըրֆաքս» լրատու գործակալութիւնը մէջբերած է «սպա-



Փութին՝ ժողովի պահուն:

յակոյտի մասնագէտներ», որոնք յայտնած են, թէ Ռուսիա արդէն պատրաստած է շարք մը միջոցառումներ՝ հակադարձելու համար Ուաշինկթընի, եթէ անկիս հակահրթիռային պաշտպանութեան

զոյւթիւններ մշակէ: Ասիկա նոր չէր, սակայն արտայայտութիւններ կանխահա քննութիւն մը կը թուէին ըլլալ Իվանովի վճռակամութեան, որ նախարարութիւնը միաձայն խօսի:

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՅԱՆՁՆՈՒԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԱՍՈՒՆԸ

ԱՆԹԻԼԻԱՍ - Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան Տեղեկատուական Բաժանմունքը կը հաղորդէ, որ յառաջիկայ Մայիսին, Լիբանանի մէջ, Կիլիկոյ կաթողիկոսութեան կողմէ կազմակերպուած 1700ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս, Վատիկանի կողմէ Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսութեան պիտի յանձնուի մատուցը մը Ս. Գրիգոր Լուսաւորչի Աշխարհընկեր:

Մատուցը Վատիկանէ պիտի բերուի յանուն Յովհաննէս Պողոս Բ. պապին, Արամ Ա. կաթողիկոսին պիտի յանձնուի Վատիկանի միջեկեղեցական բաժանմունքի նախագահ Կարտինալ Գասպար:

Մատուցի պաշտօնական փոխանցումը տեղի պիտի ունենայ Ս. Նշան Մայր Եկեղեցոյ մէջ, միջեկեղեցական արարողութեան մը ընթացքին, 27 Մայիս 2001ին, երբ կարտինալ Գասպար պիտի ընթերցէ նաեւ Ըռոմի պապին ողջոյնի գիրը:

Advertisement for 'ՄԱՐՁԻԿ' magazine, issue 3 (225), dated March 2001. Includes a photo of a woman and text about the magazine's content.

Advertisement for 'ՄԱՐՁԻԿ' magazine, issue 3 (225), dated March 2001. Includes a list of articles and authors, such as 'Մարդիկ' by Գ. Սարգսյան and 'Մարդիկ' by Գ. Սարգսյան.

### ՊԱԼԹԵԱՆ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ ՆԱԽԱՅԻՆ ԱՐԿԱԾ

Գերմանիոյ եւ Դանիոյ միջեւ Պալթեան ծովուն մէջ քարիղատար նաւու մը եւ բեռնատար նաւու մը միջեւ Չորեքշաբթի գիշեր տեղի ունեցած բախումի մը պատճառով աւելի քան հազար թոն քարիղղ թափած է ծովուն մէջ:

Նաւը Էսթոնիայէն Շուէտ կ'ուղղուէր: Դանիոյ եզերագահ պատասխանատուներ երէկ յետմիջօրէն յայտնած են, թէ Դանիայէն, Գերմանիայէն եւ Շուէտէն նաւեր պիտի փորձեն քարիղղ ընթացքը սանձել:

Հաւանական կը նկատուէր, որ չափազանց ուժեղ հովեր արգելակեն հակապալանում գործողութիւնը: Ըստ գերմանացի եզերագահներու, նաւը «Պոլիքի Քիլիք», 30 հազար թոն քարիղղ կը փոխադրէր:

(ՌՈՅԹԸՐԶ)

### ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ՀՐԹԻՈՒՆԵՐ ԻՆԿԱՄԵՆ ՔՈՍՈՎՈ

Մակեդոնական հրթիռներ երէկ ինկած են Բոսնիո՞ 2 քաղաքացիներ սպանելով, ուրիշներ վիրաւորելով եւ շրջանին մէջ ՕթԱՆեան ուժերուն կեանքը վտանգելով: ՔեՅՅՅՐԻ հրամանատար գորավար Քարլո Քապիկոսուցաւ յայտնած է զէպլին համար:

Մակայն Մակեդոնիա երէկ յետմիջօրէնի հերքած է, թէ իր ուժերը պատասխանատու եղած են Բոսնիո ինկած հրթիռներուն:

Մակեդոնիոյ պաշտպանութեան նախարարութեան մէկ բանբերը, պատասխանելով հարցումի մը, թէ ո՞վ կրնայ պատասխանատու ըլլալ, ըսած է. «Ամէն ինչ կարելի է. ասիկա աղոտ պատերազմ մըն է»:

Մակեդոնական յարձակողականը, որ վերջին ճիգ մը կը նկատուի ծագումով ալպանացի ըմբոստ զինեալներու ետ մղելու, երէկ կը թուէր սուր դիմադրութիւն դիմադրուել:

Շրջանին մէջ զինեալներու մէկ հրամանատար յայտնած է, թէ զինեալները տակաւին իրենց դիրքերուն վրայ կը գտնուին՝ հիւսիսային Մակեդոնիոյ երկայնքին հողամասի մը վրայ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՐԱՆ

### ՄԵԾԱԹԻԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԵՀՐԱՆ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)։- Աւելի քան քառասուն հոգի ձերբակալուեցաւ Իրանի հարաւային Լամերտ քաղաքին մէջ, ուր խռովութիւններ ծայր տուած էին այս շաբթուան ընթացքին, հանրապետական պատկերասփռուի պետական կայանը:

Յիշեալ աղբիւրը աւելցուց, որ ձերբակալուածները կարելու դերակատարութիւն ունեցած են Երեքշաբթի օրուան խռովութիւններուն: Լամերտի բնակիչները բարկացած էին, որովհետեւ կառավարութիւնը կը ծրագրէ մօտակալ Մոհր քաղաքին մէջ կառուցել քարիղղի պտարան մը: Նախագահ որոշուած էր, որ պտարանը պիտի կառուցուի Լամերտի մէջ:

●ՆԳԿԱՍՏԱՆԻ վարչապետ Աթալի Պեհարի Վաճիպէ Ապրիլ 10ին Իրան պիտի ժամանէ, պաշտօնական այցելութեան մը համար: Վաճիպի պիտի ընկերանայ քաղաքական ու տնտեսական բարձրաստիճան պատուիրակութիւն մը:

Advertisement for 'A review of daily oral pathology for the general practitioner: Presentation of cases and discussion presented by DR. ZIAD NOUJEIM (Senior lecturer of the Lebanese University)'. Includes a photo of Dr. Ziad Noujeim and text about the book's content.

Large advertisement for '1700 ԱՄԵԱԿԻ ՃԱՄԲՈՎ ՈՒՄՏԻ ԹԱՓՈՐ ԴԵՊՈ ԱՆԹԻԼԻԱՍ'. Includes text about a book 'ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ ԿԻՐԱԿԻ, 1 ԱՊՐԻԼ 2001, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 7:30' and a logo.

ՎԵՆԵՏԻՆ

ՀՕՄԻ 91 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ՀՕՄԻ Արևմտեան Ամերիկայի ընտանիքը կիրակի, 25 Մարտին, Կլենտոնի Ռիլլան միջնակարգ դպրոցի սրահին մէջ նշեց միութեան հիմնադրութեան 91-ամեակը:

Օրուան բանախօսն էր Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Կարո Արմէնեան: Ներկայ էին թեմի առաջնորդ Մուշեղ եպ. Մարտիրոսեան եւ Կլենտոնի հոգեւոր հովիւ Արտակ քահանայ: Տեմի ղեկավարը սի մէջ Հայաստանի գլխավոր հիւպատոս Վալերի Մկրտումեան, ՀՕՄԻ կեդրոնական վարչութեան փոխատենագետ Հուրի Տէր Սիմոնեան եւ անդամ Ռոզին Սաղոմեան, ՀՕՄԱ կանոններ եւ համակիրներ:

Բոլոր խօսք առնողները, շնորհաւորելէ ետք ՀՕՄԻ տարեգրքը, շնորհակալութեան ունեցած կարեւոր դերակատարութիւնը Սփիւռքի, Հայաստանի, Արցախի եւ ներկայիս՝ Զաւախքի մէջ:

Կարո Արմէնեան իր խօսքին մէջ բացատրեց այն սերտ աղերսը, որ գոյութիւն ունի Ակնուկի «Դէպի Երկիր» կոչին եւ ՀՕՄԻ առաքելութեան միջեւ: Ան ըսաւ, որ ՀՕՄԻ հիմնադրութեան անուշ, երկու տասնամեակ շարունակ, մեծ թափով կը պարպուէր Արեւմտեան Հայաստանը եւ հայրենիքը: Կարո Արմէնեան իր խօսքին մէջ բացատրեց այն սերտ աղերսը, որ գոյութիւն ունի Ակնուկի «Դէպի Երկիր» կոչին եւ ՀՕՄԻ առաքելութեան միջեւ: Ան ըսաւ, որ ՀՕՄԻ հիմնադրութեան անուշ, երկու տասնամեակ շարունակ, մեծ թափով կը պարպուէր Արեւմտեան Հայաստանը եւ հայրենիքը: Կարո Արմէնեան իր խօսքին մէջ բացատրեց այն սերտ աղերսը, որ գոյութիւն ունի Ակնուկի «Դէպի Երկիր» կոչին եւ ՀՕՄԻ առաքելութեան միջեւ: Ան ըսաւ, որ ՀՕՄԻ հիմնադրութեան անուշ, երկու տասնամեակ շարունակ, մեծ թափով կը պարպուէր Արեւմտեան Հայաստանը եւ հայրենիքը:

Կարո Արմէնեան նշեց, որ յատկապէս համայնքի անդամները, որոնք միութեան փոքրամասն տարիներուն Արեւմտեան Հայաստանի ժողովուրդը իր քայքայուած անտեսութիւնը վերականգնելու համար կարիքը ունէր «աշխարհով մէկ ցրուած իր հարգատներուն օգնութեան»:

Բանախօսը յիշատակեց անուններ Ակնուկի եւ Սիւսանի, որոնք այն օրերուն փութացին Ամերիկա՝ կազմա-

կերպելու համար այդ օգնութիւնը եւ յորդորելու ժողովուրդը, որ իր միակ իրական ապաստանը հայրենի երկիրը կրնայ ըլլալ:

Իր խօսքին վերջին բաժինով Կ. Արմէնեան անդրադարձաւ ՀՕՄԻ գործունէութեան այսօրուան հանգրուանին՝ յայտնելով, որ ՀՕՄԻ վճարական դեր ունի կատարելիք հայկական պետականութեան եւ Սփիւռքի պատմական կապը իր ամէնօրեայ գործով ձեւաւորելու գործին մէջ: ՀՕՄԻ նաեւ վճարական դեր ունի կատարելիք նախկին խորհրդային Միութեան եւ Արեւելեան Եւրոպայի հայ ազգային հաւաքականութիւնները կազմակերպելու մեծ գործին մէջ, վճարական դեր ունի կատարելիք վերջին տարիներուն Հայաստանէն տեղի ունեցած արտագաղթով գոյացած գաղութներու կազմակերպման գործին մէջ եւ, վերջապէս, ան մեծ դեր ունի կատարելիք Սփիւռքի կարիքները վերականգնելու եւ վերստին սահմանելու կենսական գործին մէջ:

«Այս բոլորը կարենալ ընելու համար ան պէտք ունի ֆինանսական նոր կարողականութեան, նոր մարդուժի, իր կառուցները արդիականացնելու նոր մտածողութեամբ», եզրակացուց Կ. Արմէնեան:

ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի մասնաճիւղի Երկրորդ վարչութեան խօսքը փոխանցեց ատենագետ Մարո Չալեան Ռիտ, որ ըսաւ, թէ մասնաճիւղի գործունէութիւնը վերջին 12 տարիներուն էր, որ ծաւալեցաւ, մասնաւորապէս անսովոր Հայաստանի եւ Արցախի կարիքներուն: Ան շնորհակալութիւններ արտայայտեց իր տանի տնտեսական օժանդակութիւն հասցնելու Զաւախքի հայրութեան:

ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՕՆԸ

Կիրակի, 25 Մարտ 2001ին, ըստ անդուլթեան կատարուեցաւ տոնախմբութեան հանդիսաւոր Ս-պատարագ Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ անուան յիշատակին:

Ամրող շաբաթ մը, 19-24 Մարտին, Եկեղեցին ունեցաւ յատուկ ժամերգութիւններ, իբրեւ ՌԻՏՏԻ ՇԱՌԻԹ: Երեկոները տեղի ունեցան հսկումի արարողութիւններ, իսկ Եկեղեցւոյ թաղական խորհուրդը, Տիկնանց յանձնախումբը եւ զպրաց դասը կատարեցին:



Կ օրինակի երիտասարդ (Լուսանկարը՝ Գօգօ Գեմտիրեանի)

աւանդական ՀԵՐԻՍՍԱՒ- մատաղի աշխատանքները: Բազմաթիւ նուիրատու հայրերին մասնակցեցան մատաղի ոչխարի եւ այլ կարգի նուիրատուութիւններուն: Երջանին մէջ ժողովրդական ոգեւորութիւնը հանգիստ եկեղեցւոյ եւ ազգային անդուլթիւններուն պահպանելու ջանքերը խանդավառելու նպատակով յանձն առնուած էր այս աշխատանքը:

Կիրակի առաւօտեան ժամերէն ետեւեւր մեծ էր Եկեղեցւոյ շուրջը: Օրուան պատարագիչը եւ քարոզիչը Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Նաչբեան ղեկավարուեցաւ հաւատացեալներու կողմէ: Եկեղեցական արարողութեանց երգեցողութիւնը կատարեցին «Նարեկացի» երգչախումբին եւ զպրաց դասին անդամները, խմբավարութեամբ Գէորգ Պէպէճեանի:


Սրբազան քարոզիչը աւուր պատշաճի բնաբանով մը, ուր կը մեկնաբանուէր «Երկիրի արքայութեան զանազան տիրանալու» Աւետարանի պատգամը, որուն ընդմէջէն ան վեր առաւ քառասուն մանուկներու Սերատիոյ լիճին մէջ նահատակութիւնը՝ յանուն քրիստոնէութեան:

Յաւարտ Ս. պատարագի տեղի ունեցաւ ճաշկերոյթ: Ներկայ եղան՝ սրբազանը, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան, Լիբանանի մէջ Արցախի հանրապետութեան ներկայացուցիչ Կարո Քեպպեան, շրջանի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, նուիրատու ազգայիններ եւ հիւրեր:

Ճաշկերոյթը ունեցաւ զեղարուեստական տպաւորիչ յայտագիր մը:

Դպրաց դասի անդամներէն մեներգներ կատարեցին Սիլվի Սիմոնեան, Անի Մաչուրեան, Յովիկ Քէօզկէր-ԹՂԹՎԻԻՑ Ծարը՝ էջ 10

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՅԵԼԵՑ ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՅ ԵՒ ԿՈՒՐԱՆՈՅ



Արամ Ա. կաթողիկոս՝ Ազգային Ծերանոցին - կուրանոցին մէջ

Երեքշաբթի, 27 Մարտի կէսօրին, Արամ Ա. կաթողիկոս այցելեց Պուրճ Համուտի Ազգ. Ծերանոց-կուրանոցը: Տարիներու անդուլթեան համաձայն, այս հաստատութեան պատարագները Մեծ պահքի կիսուն, Սիլիւսի առիթով, կ'այցելեն Անթիլիասի մայրավանքը: Ազգ. Ծերանոցի եւ կուրանոցի խնամակալութեան հրահրումով այս տարի վեհափառը ինչ հրահրուեցաւ ծերունիներուն հետ ըլլալու իրենց հաստատութեան մէջ, նկատի ունենալով, որ Անթիլիասի մայրավանքի սեղանատան շէնքը հիմնական փոփոխութեան կենթարկուելու է: Դպրեվանքի սարկաւազներ պատարագներուն համար երգեցին, իսկ ծերունիներէն շատեր մասնակցեցան երգեցողութեան: Երգերով եւ ասմունքներով ելոյթ ունեցան նաեւ նոյն հաստատութեան «Թեքած Մանուկներու վարժարան»ի աշակերտները: Վեհափառ կէսօրուան ճաշին սեղանակից դարձաւ պատարագներուն: Վեհափառը գնահատեց հաստատութեան պատարագներուն հետ ըլլալու պաշտօնները՝ «ազգային ծառայութիւն» որակելով անոնց աշխատանքը: Ճաշի հիւրասիրութիւնը ստանձնած էր Անթիլիասի մայրավանքի տիկնանց յանձնախումբը:

ՊԱՏԳԱՄԱՌԱՐԱԿԱՆ ՀԻՆՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԼՈՒՌԻ ԹԻՒ 49 ԸՆՏՐԱՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորական միակ թափուր աթոռին՝ Լուրի մարզի թիւ 49 ընտրաշրջանին համար ընտրութիւնները տեղի պիտի ունենան 20 Մայիսին:

Ըստ Կեդրոնական ընտրական յանձնախումբի քարտուղար Արմենուհի Չոհրաբեանի, հինգ թեկնածուներ առաջարկուած են այս աթոռին համար, որոնցմէ երկուքը՝ Հ. Յ. Դ. անդամ Չոհրապ թորոսեան (Լուրի մարզապետարանի կրթութեան վարչութեան պետի տեղակալ) եւ ՀՀԿ անդամ Արսէն Դարբինեան (Սպիտակի «Ճանապարհ» ընկերութեան տնօրէն), առաջարկուած են իրենց կուսակցութիւններուն կողմէ: Իսկ անձնական նախաձեռնութեամբ իրենց թեկնածուութիւնը ներկայացուցած են՝ Հայաստանի Համայնավար կուսակցութեան անդամ Արամ Նաչատրեան (Վանաձորի Մանկավարժական Հիմնարկի ամպիոնի վարիչ) եւ անկուսակցականներ ու անգործներ՝ Ռուտուֆ Յովսէփեան եւ Սամուէլ Բարյանեան:

Թեկնածուները մինչեւ 5 Ապրիլի երեկոյեան ժամը 6:00 պէտք է Լուրի մարզային ընտրական յանձնախումբին ներկայացնեն անհրաժեշտ ընտրական փաստաթուղթերը:

ՅՐԳ ՏԱՐԻՆ ԸԼԼԱԼՈՎ

Հ. Յ. Դ. ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐ» ՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Հետեւելով «Դէպի Երկիր» կարգախօսին՝ Հ. Յ. Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի անդամները այս տարի եւս կազմակերպած են «Երիտասարդական ջոկատներ»:

1994ին ի վեր «Երիտասարդական ջոկատներ» կազմելու ծրագիրը եղած է Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան գլխավոր աշխատանքներէն մէկը: Այս ծրագիրը առիթ կու տայ Հայ Երիտասարդութեան շուրջ հինգ շաբթուան ընթացքին տեսնելու Հայաստանի եւ Արցախի տեսարժան վայրերը եւ միեւնոյն ատեն առիթ կը տրուի անոնց հայրենիքը վայելելու իրենց տեղացիները գլխավորաբար պիտի աշխատին Արցախի Աշան գիւղին մէջ: Աշան գիւղը պիտի ըլլայ անոնց բնակավայրը եւ աշխատավայրը: Մասնակցողները հին դպրոց մը վերանորոգելով՝ գոյն պիտի վերածեն նոր ճամբարի մը, որ պիտի ծառայէ Արցախի մանուկներուն եւ երիտասարդութեան:

Երիտասարդական ջոկատներուն անդամները մօտէն կը ծանօթանան արցախցիին զգացումներուն եւ մտածելակերպին, ինչպէս նաեւ Արցախի կեցութեան ընթացքին անոնք կ'աշխատին խումբերու մէջ՝ զարգացնելով անձնակրթութեան զարգացումը:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶՁԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ «ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

«ԼՈՒՌԻ ՊՂԻՆՁ» ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ՄՇԱԿՈՒԻ

Այսօր «Մանես եւ Վալիբեա» ընկերութիւնը մշակած է երեք փուլերէ (հետազոտական, հիմնական եւ ընդլայնման) բաղ-

կացած «Լուրի պղինձ» ծրագիրը:

Ըստ այս ծրագրին, կը նախատեսուի առաջին փուլին (մինչեւ 2002) գործարկելու հարկային լեւնային մետաղաձուլութեան գործարանը, որ պէտքի տարեկան 10 հազար թոն կարենայ արտադրել: Այդ փուլին պիտի սկսի Այսօրվերի հանքերուն օգտագործման աշխատանքները եւ պիտի մշակուի թեքնիք-տնտեսական ծրագիր՝ Հայաստանի հիւսիսային շրջանին մէջ հանքաքարի հարուստացման եւ խտանելիք արտադրութեան համար:

Հիմնական փուլին (2002-2007) կը նախատեսուի կառուցել ժամանակակից պղնձաձուլական գործարան, որ պիտի կարենայ գտել ծծումբի 90 առ հարիւր եւ տարեկան 25 հազար թոն գտուած պղինձ արտադրել:

Վերջին փուլը (2007-2010) կ'ընդգրկէ գործարանները աւելի հզօրացնելու եւ նոր արհեստագիտութեան ներդրումը, ինչ որ կարելիութիւն կու տայ այս փուլի աւարտին ունենալ տարեկան 50 հազար թոն գտուած պղինձի արտադրութիւն:

Միաժամանակ պիտի շարունակուին աշխատանքները վրաստանի Մառնիկոյի լեռնահարուստացուցիչ գործարանին հետ, միացեալ ձեւաւորութիւն մը ստեղծելու ուղղութեամբ:

STUDIO Lantern • Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ ԷՆ. 01-268866 ԵՆ. 03-925399

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ ԹԵՅՐՈՒՉԵԱՆԻ

Կիրակի, 25 Մարտ 2001ին, Պուրճ Համուտի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ օծման արարողութիւնը:



Յովհաննէս եպ. Թէրոյզեան:

Ներկայ եղան հանրապետութեան Գաղափարի Գերակայացուցիչ Գալուստ Սեպուհի Յովհաննէսեան, վարչապետ Ռ. Հարիրիի Գերակայացուցիչ Գալուստ Ժան Լուի Քըրտաճի, խորհրդարանի Գալուստ Գալուստի Պըրրիի Գերակայացուցիչ Անթուան Հատատ, Լիբանանի մէջ պապական նուիրակի Գերակայացուցիչը, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նուսարրեան, Կիլիկիոյ կաթողիկոսութեան Գերակայացուցիչ Վարդան արք. Տեմիրճեան, համայնքներու քարոզչական եկեղեցականներ, Գալուստի վարչապետ Ռաշիտ Սոլիմ, երեսփոխաններ՝ Ժան Օղասապեան, Ժորժ Գասարճի, Սեթ Թորոսաբեկեան, Գալուստի վարչապետ Զարեհ Սեթ Զարեհեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան, ազգային պատկան մարմիններու Գերակայացուցիչներ եւ հաւատացեալներ:



Ձեռնադրութեան պահուն:

Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան, Լիբանանի մէջ Արցախի հանրապետութեան ներկայացուցիչ Կարո Քեպպեան, շրջանի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, նուիրատու ազգայիններ եւ հիւրեր:

Ճաշկերոյթը ունեցաւ զեղարուեստական տպաւորիչ յայտագիր մը:

Դպրաց դասի անդամներէն մեներգներ կատարեցին Սիլվի Սիմոնեան, Անի Մաչուրեան, Յովիկ Քէօզկէր-ԹՂԹՎԻԻՑ Ծարը՝ էջ 10



Արամ Ա. կաթողիկոս՝ Ազգային Ծերանոցին - կուրանոցին մէջ

Երեքշաբթի, 27 Մարտի կէսօրին, Արամ Ա. կաթողիկոս այցելեց Պուրճ Համուտի Ազգ. Ծերանոց-կուրանոցը: Տարիներու անդուլթեան համաձայն, այս հաստատութեան պատարագները Մեծ պահքի կիսուն, Սիլիւսի առիթով, կ'այցելեն Անթիլիասի մայրավանքը: Ազգ. Ծերանոցի եւ կուրանոցի խնամակալութեան հրահրումով այս տարի վեհափառը ինչ հրահրուեցաւ ծերունիներուն հետ ըլլալու իրենց հաստատութեան մէջ, նկատի ունենալով, որ Անթիլիասի մայրավանքի սեղանատան շէնքը հիմնական փոփոխութեան կենթարկուելու է: Դպրեվանքի սարկաւազներ պատարագներուն համար երգեցին, իսկ ծերունիներէն շատեր մասնակցեցան երգեցողութեան: Երգերով եւ ասմունքներով ելոյթ ունեցան նաեւ նոյն հաստատութեան «Թեքած Մանուկներու վարժարան»ի աշակերտները: Վեհափառ կէսօրուան ճաշին սեղանակից դարձաւ պատարագներուն: Վեհափառը գնահատեց հաստատութեան պատարագներուն հետ ըլլալու պաշտօնները՝ «ազգային ծառայութիւն» որակելով անոնց աշխատանքը: Ճաշի հիւրասիրութիւնը ստանձնած էր Անթիլիասի մայրավանքի տիկնանց յանձնախումբը:

Յովհաննէս վրդ. Թէրոյզեան 1965ին ձեռնադրուած է վարդապետ Քարտիկալ Աղաճանեանի քաջալերմամբ: Պաշտօններ վարած է Հայկաի, Պէլլոսի եւ Պուրճ Համուտի մէջ՝ իբրեւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետ եւ Մետրոպոլիտ վարժարանի տնօրէն, հոգեւոր խորհրդատու: Եղած է ստակալատար Ձմառու վանքի, որ վարած է Գալուստի պատարագներու պաշտօնները:

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, Եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ շնորհաւորութիւն:



# Միջազգային Քաղաքական

## ԿԱՍՊԵԱՆ ԱԻԱԶԱՆԻ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԹԱՓ ԿԸ ՍՏԱՆԱՅ

12 Մարտին Ազրպեյձանի նախագահ Հայդադ Ալիևը պաշտոնական այցելություն է ունենում Թուրքիա: Նույն օրը Իրանի նախագահ Մոհամադ Խաթամիի անկողինում Թուրքիայի գերատեսչության մեջ կը գումարահարկ Մոսկովայի մէջ, Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի հետ: Կասպեան չըջանի այս երկու բանալի ղեկավարներուն կատարած ճամբորդութիւնները ցոյց կու տան, որ չըջանի քարիւղի եւ կազի աղբիւրներուն շուրջ մրցակցութիւնը աւելի մեծ թափ կը ստանայ:

Հիմնական հարցը Կասպից ծովու տարածքային բաժանումն է մէջ բնական աղբիւրներուն եւ արտաժառանգի ղեկավարներուն վրայ հակակշիռ ունենալու մրցակցութիւնն է: Նախապէս որոշուած էր, որ Կասպեան աւազանի հինգ երկրները՝ Ազրպեյձան, Իրան, Ղազախստան, Ռուսիա եւ Թուրքմենիստան, հանդիպում մը պիտի ունենային 8 եւ 9 Մարտին, Թուրքմենիստանի մայրաքաղաք Աշխապատի մէջ, որ սակայն յետաձգուեցաւ երկրորդանի բանակցութիւններու յաւելեալ առիթ ընծայելու համար:

Կասպից ծովու սահմանագծումին շուրջ համաձայնութիւնը ամէն ժամանակէն աւելի դժուարահաս կը թուի ըլլալ: Իրան իբրեւ հզօր ուժ կը ներկայանայ Կասպեան աւազանի համաձայնութեան մէջ եւ, ըստ երեւոյթին, բաւարարուած չէ տարածքային բաժանման գծով ներկայիս տիրող մտածողութեամբ: Ներկայիս պատկերացման հիման վրայ Իրանի բաժինը 14 տոկոսէ: Ան կ'ուզէ համոզել Կասպից ծովը եզերող երկրները, որ Իրաք-քանիւրին հաւասար բաժին տրուի աղբիւրներէն, այլ խօսքով՝ իւրաքանչիւրը ունենայ 20 տոկոս բաժին: Ազրպեյձան, ինչպէս նաեւ Ռուսիա եւ Ղազախստան ղէմ կ'եցած են այդ տեսակէտին: Թուրքմենիստան, որ Իրանի համար կազի կարեւոր մատակարար մըն է, գործարկէ Թեհրանին, հակառակ անոր որ Իրանցի ղեկավարները արտաձեռարար կը պահանջեն, թէ Աշխապատի նեցուկը աւելի խօսքի ծիրին մէջ է, քան՝ գործի: Սակայն Մոսկովա տուած իր այցելութեան ընթացքին իրարմէն կը թուի բաւական մեծ յաղթանակ տարած ըլլալ, որովհետեւ, ըստ երեւոյթին, ան յաջողած է համոզել Մոսկովան, որ վերատեսութեան ենթարկէ Կասպեան բաժանու-

մին մասին իր տեսակէտը: Խաթամի եւ Փութին ստորագրեցին միացեալ յայտարարութիւն մը, ուր կը նշուի, թէ Իրան եւ Ռուսիա պիտի չձանձնան որեւէ համաձայնութիւն, որ հինգ երկիրներուն կողմէ միաձայնութեամբ որդեգրուած չէ:

Կասպեան հարցերու ղէտեր տակաւին չեն ակնկալեր, որ Իրան ձեռք կը ձգէ իր պահանջած 20 տոկոսը, սակայն իրարմէն Փութին ընդդիմութիւն կրնայ ճամբան հարթել ընդունելով լուծումի մը: Կասպեան քաղաքականութեան ղէտերուն համաձայն, Ռուսիա կրնայ պատրաստ ըլլալ վերասահմանագծելու քարտէսը՝ Իրանին 1 կամ 2 տոկոսի յաւելեալ բաժին տալու համար:

Ազրպեյձանի ղեկավարները դատարարեցին ռուս-իրանեան միացեալ յայտարարութիւնը: Վերադառնալով Ալիևը՝ իրարմէն հանդիպումով միայն, որ կարելի պիտի ըլլայ լուծել կասպեան սահմանագծութիւնները: Ալիևը ծրագրած է Յունիսին այցելել Իրան, սակայն Թեհրանի մէջ կասպեան քաղաքականութեան ղէտեր հաւանական չեն նկատեր այդ թուականը, նկատի ունենալով, որ վերջին երկու տարիներուն ընթացքին երբեք «ծրագրուած» հանդիպումներ յետաձգուած են քաղաքականութեան փոփոխութեան պատճառով: Երկու երկիրները տակաւին հարցեր ունին Կասպից ծովու բնական աղբիւրները բաժնեկցելու, աշխարհաքաղաքական դաշնակցութիւններու եւ նոյնիսկ ելեկտրականութեան բաշխման մարզերուն մէջ:

Նոյնիսկ եթէ կասպեան համաձայնութիւնը գոյանայ, Իրան-Ազրպեյձան յարաբերութիւնները հաւանաբար շարունակեն լարուած մնալ: Երկու կողմերն ալ երկար ցանկ մը ռուսի ղեկավարներուն սկսելով աշխարհաքաղաքական մտահոգութիւններէն: Իրան Ազրպեյձանը կը մեղադրէ կասպեան շրջանը լայնօրէն բանալու համար Իսրայէլի առջեւ, որուն հետ Ազրպեյձան շատ սերտ կապեր ու-

նի, ինչպէս նաեւ կը գանգատի, որ ՕԹԱՆԻ հետ Ազրպեյձանի կապերը առիթ կու տան անոր, որ ոտքի տեղ ունենայ շրջանին մէջ: Այս քննադատութիւններուն կ'արձագանգէ նաեւ Մոսկովա:

Ազրպեյձան Սիացեալ Նահանգներուն հետ կապերը սերտացնելով Ռուսիոյ շրջանակէն դուրս գալու իր գոյու փորձերուն մէջ Իրանի շարունակական քննադատութիւնները նեղացուցիչ կը գտնէ: Ազրպեյձանցի պաշտօնատար մը հետեւեալ ձեռքով բացատրեց կացութիւնը: «Մենք չըջապատուած ենք երկու մեծ բանակ ունեցող երկիրներով՝ Ռուսիա եւ Իրան: Շատ տրամաբանական է, որ զաշնակիցներ փնտռենք այլուր»: Ռուս-իրանեան յարաբերութիւնները մեծ դեր պիտի ունենան Պաքու-Թեհրան կապերու զարգացման մէջ: Կասպեան ղէտեր Թեհրանի մէջ արտայայտած են այն համոզումը, որ Ռուսիոյ հանդէպ հաշտարար մտեցումը կրնայ զօրացնել երկու երկիրներուն կապերը եւ Ազրպեյձանին ու Ղազախստանի ուժը նուազեցնելով՝ պակսեցնել Միացեալ Նահանգներուն ազդեցութիւնը շրջանին մէջ:

Քարիւղատարներուն հարցը նաեւ լարուածութիւն կը ստեղծէ: Իրան զարգացած է այն պատճառով, որ Ազրպեյձան կը մերժէ նեցուկ կանգնել իր հողերէն անցնող քարիւղատարին, հակառակ անոր որ արեւմտեան քարիւղի ընկերութիւններ կը պաշտպանեն այդ ծրագիրը: Հակադրութեամբ Ազրպեյձանի այդ կեցուածքին՝ Իրան 2000ի Հոկտեմբերին ընդհատեց Իրանի հիւսիսային սահմանակից Նախիջբանի ինքնավար մարզի ելեկտրականութեան մատակարարումը: Իրան կը հայտնայ թէ այդ շրջանի ելեկտրականութեան շուրջ 60 տոկոսը: Այդ քայլը անձնապէս գայրագետ Ալիևը, որուն ծննդավայրն է Նախիջբանը, շեղադային յայտարարութեցաւ, որ ելեկտրականութեան ընդհատումին պատճառը հիմնականօրէն Ազրպեյձանի պարտքերու վճարման դանդաղ ըն-

թացքն էր եւ ոչ թէ քարիւղատարի քաղաքականութիւնը: Ելեկտրականութիւնը քարիւղի փոխարէն համաձայնութեան մը հիման վրայ Թեհրանի պարտք ունի տակաւին: Եւ անհամաձայնութիւններու ցանկը երկար է:

Ազրպեյձան կը դժգոհի, որ Իրան շատ սերտ կապեր ունի Հայաստանի հետ: Իրանի մէջ Ազրպեյձանի դեսպան Ապպաս Ալի Հասանով վերջերս հրապարակաւ հարց տուաւ, թէ՞ «ինչո՞ւ Իրան յարաբերութեան մէջ է Հայաստանի հետ, որ գրաւած է Ազրպեյձանի տարածքին 20 տոկոսը, եւ այն տեղէն արտաքսած՝ 1 միլիոն ազրպեյձանցիներ: Այդ ժողովուրդը իսլամ չէ՞»: Անտեսելով Պաքուի մտահոգութիւնները Իրան վերջերս Յունաստանի հետ միասին եռակողմանի համաձայնութիւն մը կնքեց Հայաստանի հետ, որ կ'առնչուէր երբեք երկիրներուն միջեւ քաղաքական եւ առեւտրական համագործակցութեան զարգացման:

Իրանի կարգին կը գանգատի, որ Իսրայէլի աջակցութեամբ փորձեր կը կատարուին Իրանի ազերի համայնքը զբոսելու, որ կը կազմէ Իրանի բնակչութեան 25 տոկոսը: Շատ մը Իրանցիներու մտան, ազերի ծագումով իրանցիները եւս դժգոհ են Իրանի տնտեսութեան յետադիմութեամբ եւ խոտաճեցում քաղաքական բարեկարգումներու յայտնուածով, սակայն անընտրաբար կ'աջակցեն Իրանի քաղաքականութիւնները չեն արտայայտեր:

Այս բոլոր հարցերուն հիմք կը հանդիսանայ երկուստեք անվստահութիւնները, որ կ'արգելակէ յարաբերութիւններու որեւէ բարելաւում: Ազրպեյձանցիներու մտայնութեան ծանօթ արեւմտաքաղաքական հարցերու խորհրդատու մը այսպէս կը ներկայացնէ անոնց տեսակէտը: «Ալիև Իրանը մը բարոսական եւ ուրիշին գործերուն խառնուող կը համարէ: Ան նաեւ անձնական հակակրօնք ունի իրանցիներուն հանդէպ: Ան գիտէ, որ ստիպուած է անոնց հետ գործ ունե-

նալ, բայց շատ պիտի փափաքէր, որ անոնք յանկարծ անհետանային»: Իրանցի պաշտօնատար մը անդրադառնալով թշնամութեան հարցին բացատրեց Ազրպեյձանի նկատմամբ պաշտօնական Իրանի կեցուածքը եւ ըսաւ, թէ «չատերու մօտ կայ այն կարծիքը, որ Ազրպեյձան փոքր երկիր մըն է, որ անընդհատ կը դիմէ Իսրայէլի, Մոսատի եւ Միացեալ Նահանգներու օգնութեան, եւ որ կը գնուի ու կը ծախուի քարիւղի եւ ամերիկեան շահերուն հիման վրայ: Մենք դժուարութիւն ունինք վստահելու անոնց իրեւ կասպեան գործակիցներ, որովհետեւ անոնք պիտի նախընտրէին Միացեալ Նահանգներուն գործակիցները ըլլալ»:

Սակայն, հակառակ փոխադարձ անվստահութեան եւ գոյութիւն ունեցող անհամաձայնութիւններուն, նկատելի է յարաբերութիւններու որոշ բարելաւում: Փետրուարի սկիզբը Ալիևը զարմացուց բոլորը, երբ ներկայ գտնուեցաւ Պաքուի մէջ կայացած Իրանեան Յեղափոխութեան 22րդ տարեդարձի հանդիսութեան: Իսկ Իրանի հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Ալի խաթամենի իր կարգին բարեմաղթութիւններ յղեց Ալիևին միջնորդներու ճամբով: Անցեալ ամիս համագործակցութեան համաձայնագիրներ ստորագրուեցան շրջանային առեւտուրի գրասենյակներուն միջեւ, ինչպէս նաեւ՝ մաքսային մարզին մէջ, որուն հիման վրայ նուազեցան փոխադրականութեան վճարելիք տուրքերը: Սակայն մաքսերու եւ առեւտուրի գրասենյակներու համաձայնութիւններէն աւելին կը պահանջուի երկու երկիրներուն իսկական հարցերուն լուծման համար:

Յառաջիկայ Յունիսին Ալիևը կրնայ այցելել Իրան, սակայն հարկ է սպասել զիտնալու համար, թէ այդ այցելութիւնը հաճելի պիտի ըլլա՞յ, թէ ոչ:

«Նուրեթիսկէթ»

Նոր եւ պայթուցիկ մեծ խաղ մը կը պատրաստուի, եւ Բրիտանիոյ մէջ շատ քիչը կ'անդադրուին անոր: Անիկ կը յիշեցնէ անցեալ դարուն կեդրոնական Ասիոյ եւ Հիւսիսարեւմտեան սահմանագիծին վրայ Ռուսիոյ եւ Բրիտանիոյ միջեւ գոյութիւն ունեցող կայսերական մրցակցութիւնը: Սակայն այս պարագային խաղը երկուքէն աւելի մասնակիցներ ունի եւ անոր հետապնդած նպատակը տարածքներու գրաւումը չէ, այլ՝ կողմապիսի յատկապէս Կասպեան աւազանի քարիւղի եւ կազի հսկայ պահեստները հակակշիռի տակ առնելը: Քարիւղատարները գիտաւոր դերակատարներն են այս նոր խաղին:

Քարիւղատարներու գանազան ծրագիրները գոյութիւն ունին, եւ անոնց հետ առնչուող երկիրներն են՝ Ազրպեյձան, Վրաստան, Թուրքիա, Իրան, Պուլկարիա, Մակեդոնիա եւ Ալպանիա: Արեւելքին եւ Արեւմուտքին միջեւ հինգ եկող մրցակցութիւնները այժմ կը բարդանան այլ վտանգներու գոյութեան պատճառով: չեչէն անլատողականները, քիւրտերը, ալպանացի հրոսակախուժները, Հայաստանի եւ Ազրպեյձանի միջեւ գոյութիւն ունեցող Լեռնային Ղարաբաղի տագնապը, ինչպէս նաեւ իսլամական խմբակցութիւններուն շրջանին մէջ ծաւալած գործունէութիւնը լուրջ մտահոգութիւն կը պատճառեն Մոսկովայի, Թեհրանի եւ

# ՆՈՐ ՄԵԾ ԽԱՂԸ

Ուաշինգթոնի մէջ: «Կովկասի եւ կեդրոնական Ասիոյ գանազան շրջաններուն մէջ գոյութիւն ունեցող անկայունութիւններն են տագնապներէն բացի, կայ նաեւ այն մշտական վախը, որ Ռուսիա կրնայ վերակազմել իր կարողականութիւնները, հաւանաբար շատ աւելի ազգայնական վարչակարգի մը ներքեւ», կը նշէ Պրատֆորտ համալսարանի խաղադուրիստ Լուստիանա Փոլ Ռոնըրը իր «Լուրդիկ Քրիքրոյ» («հակազիռ կորսնցնել») գիրքին մէջ: «Այդ վախը ունեցողները, կ'աւելցնէ Ռոնըրը, դժուար կը հասկնան կարեւորութիւնը այն համատարած ռուսական համոզումին, թէ ՕԹԱՆԻ ընդլայնումը եւ կասպեան աւազանին մէջ Միացեալ Նահանգներուն շահերը մաս կը կազմեն Ռուսիոյ ազդեցութեան պատմական շրջանէն ներս թափանցելու ռազմավարութեան մը»:

Ասիկա այն շրջանն է, որ կը շահագրգռէ թէ՛ Արեւելքը եւ թէ՛ Արեւմուտքը: Անիկ հարուստ է քարիւղի եւ կազի չպեղած հանքերով, մինչ ամերիկեան ուժանիւթի պահեստները հետզհետէ կը նուազին, Չինաստան անհրաժեշտօրէն պէտք կը գզայ յաւելեալ քարիւղի, եւ Մոցի երկիրներէն դուրս ոչ ոք կ'ուզէ կասկած ըլլալ Միացեալ Նահանգներու հետ զինքնաշարժի մասին, Բուէյթէն

կամ Իրաքէն, որոնք աշխարհի քարիւղի մեծագոյն պահեստներն են: Այս պայթուցիկ բայց շատերու կողմէ չձանձրուած շրջանին մէջ քարիւղը իբրեւ խոյժ կ'օգտագործուի Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Թուրքիոյ, Իրանի ինչպէս նաեւ ՕԹԱՆԻ կողմէ դաշինակցական վարչակարգի մը ներքեւ, կը նշէ Պրատֆորտ համալսարանի խաղադուրիստ Լուստիանա Փոլ Ռոնըրը իր «Լուրդիկ Քրիքրոյ» («հակազիռ կորսնցնել») գիրքին մէջ: «Այդ վախը ունեցողները, կ'աւելցնէ Ռոնըրը, դժուար կը հասկնան կարեւորութիւնը այն համատարած ռուսական համոզումին, թէ ՕԹԱՆԻ ընդլայնումը եւ կասպեան աւազանին մէջ Միացեալ Նահանգներուն շահերը մաս կը կազմեն Ռուսիոյ ազդեցութեան պատմական շրջանէն ներս թափանցելու ռազմավարութեան մը»:

Եւրոպական Միութիւնը նաեւ յայտնուած է ըստին վրայ: «Եւրոպական Միութեան ձեռնտու չէ անտեսել Հարաւային Կովկասը: Վրաստանը, Հայաստանն ու Ազրպեյձանը միասնաբար Հարաւային Եւրոպան կեդրոնական Ասիոյ միացնող ռազմաթիւ վարական միջանցք մը կը կազմեն», անցեալ ամիս «Յայնեյնըլ թայմ»-ին ըստին Եւրոպայի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի անդամ Քրիս Փաթընը եւ Շուէտի արտաքին գործոց նախարար Աննա Լինն Նախթանը: Աննա Լինն նախքան Եւրոպական Միութեան ընդհատումին պատճառը հիմնականօրէն բարձր մակարդակի առաջին այցելութիւնը: «Կասպից ծովուն յատկապէս թերեւս նոյնքան քարիւղ կայ, որքան Հիւսիսային ծովուն, ինչպէս նաեւ մեծ քանակութեամբ կազ կայ հոն եւ կեդրոնական Ասիոյ մէջ: Ուրախ լուր մը՝ ուժանիւթի ծարաւ Եւրոպայի համար», նշեցին անոնք:

Եւրոպական Միութեան պատուարակութեան շրջան այնպիսի թեւեւ անմիջապէս ետք Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնածէ ողջուցեց եւրոպացիներուն եւ Միացեալ Նահանգներուն նեցուկը Մեթաքսի մեծ ճանապարհի դադարափոխին: Երազիրը, որուն գորակը կը կանգնին Ուաշինգթոնն ու Միացեալ Նահանգներու քարիւղի ընկերութիւններ, ներառեալ «Շելլըն», կը վերաբերէ քարիւղատարի մը կառուցման, որ Թուրքմենիստանի եւ Ղազախստանի միջաբերող թիֆլիսի ճամբով պիտի փոխադրէ Ազրպեյձանի մայրաքաղաք Պաքուի մէջ: Անիկ քարիւղը Վրաստանի ճամբով պիտի փոխադրէ ճամբով ղէպի թուրքմենի ճամբով՝ ղէպի թուրքմենի ճամբով՝ ղէպի թուրքմենի ճամբով: Ռուսիա անպայմանօրէն կ'ուզէ, որ քարիւղը անցնի իր հողերուն վրայ: Իրան կ'ուզէ Կասպից ծովէն ղէպի հարաւ իջնող քարիւղատար մը, իսկ Չինաստան պէտք ունի ղէպի արեւելք երկարող քարիւղատարի մը:

Կայ ամերիկեան նեցուկը վայելող քարիւղատարի այլ ծրագիր մը, որ Պուլկարիոյ Պուլկարիա սեւեռովեան նաւահանգիստը ծովեան նաւահանգիստը պիտի միացնէ Ալպանիոյ վերջն աղբիւրական նաւահանգիստին՝ անցնելով Մակեդոնիոյ հողերէն: Նպատակը կասպեան քարիւղը ռուսական Նովոռուսիսը եւ վրացական Սուփ-

ա սեւեռովեան նաւահանգիստներէն քարիւղատար նաւերու միջոցով Պուլկարիա հասնելն է: Երազիրի գործնական նացման ռուսամիտարիւնները կը կատարուին ամերիկեան «Ամպո» ընկերութեան կողմէ եւ, ըստ պուլկարացիներուն, նաեւ «Թեքսո», «Շելլըն», «Պի ֆի Ամոքո», «Ա.Ֆիլ» եւ «Թոքսլ Էլիֆիլիս» ընկերութիւններուն գործակցութեամբ: «Շատ հաւանական» է, որ Երազիր իրագործուի, նշեց պուլկարացի պատասխանատու մը: անիկ «ապա-սով» ձեւ մըն է քարիւղին փոխադրութեան:

Մինչ Միացեալ Նահանգներ, ՕԹԱՆ, եւ այժմ Եւրոպական Միութիւն կը շարունակեն շահագրգռուած ըլլալ նախկին խորհրդային Միութեան կողմապիսի երկիրներու չրացայտուած հարստութեամբ, Արեւմուտքը նաեւ տնտեսական կարեւոր գրաւներ պիտի ունենայ Ալպանիոյ եւ Մակեդոնիոյ մէջ: Միացեալ Նահանգներ արդէն իսկ սկսած են ունենալ այն տպաւորութիւնը, որ բոլոր սերպերը վատ են, իսկ բոլոր ալպանացիները՝ լաւ: Ալպանացիներով բնակեցուած սերպական Բոսնիոյ նահանգին եւ Մակեդոնիոյ (ուր քոսովոյի զինեալներ հարցեր կը յարուցեն ալպանացի բնակչութեան մէջ) պարագահանութեան միջոցով անոր ետին պահուած իմաստը մեծ են:

Քարիւղատարներու ճամբաներու շուրջ պայ-

**simrit**  
**FAG**  
**INA**  
**Schaeffler**

**MİNASSIAN, BOULADIAN & CO.**  
BALL & ROLLER BEARINGS  
MERCEDES STR. KAZANDJIAN BLDG.  
MAR YOUSSEF, DORA - P.O.BOX 11-3494  
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140 LEBANON  
TEL:01/258547/8 MOBILE:03/628076  
FAX:01/258549 - E-MAIL:fag.leb@dm.net.lb

# ՍԱՐԴՈՍԱՏԱՅՆՆԵՐ՝ ՄԵՏԱՔՍԻ ԴԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ (Ա.)



Սիճկափորի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին:

**Ք**անտահայ լուսանկարիչ Շրայր Խաչերեան (Շրայր Բագէ) 6 Փետրուար 2001ին Թորոնթոյն ձամբար էլած է դէպի Շարագոյն Արեւելք եւ Աւստրալիա՝ լուսանկարելու համար Սիճկափորի, Պանկլատանի, Պանկլատեչի, Աւստրալիոյ եւ Թայլենտի հայկական եկեղեցիները: Ան «Ազդակ»ի տրամադրութեան տակ դրած է 24 օր տեւած իր ուղեւորութեան օրագրութիւնը՝ «Սփայտըր ուէպզ ան տը սիլը ռոտ» (Սարդոստայններ՝ Մետաքսի ձամբուն վրայ) վերնագիրով, որ վաւերական ամենն բարձր տեղեկութիւններ կը պարունակէ ժամանակակից եւ երբեմնի բարուը հայ գաղութներու վերաբերեալ: Լուսանկարիչը մանրամասնօրէն կը նկարագրէ իր այցելած բաղաբնութիւնը: Ան իր լուսանկարները ամենուրեք կը տարածուի քաղաքներու մէջ գոյատեւող հայկական եկեղեցիներուն վիճակը: Իւրայայտուած իրագործում մը, որուն արդիւնքը միաժամանակ հետաքրքրական է եւ ցնցիչ: Անոր աշխատանքը կ'ուրազծէ կորուստի դատապարտուած, բայց ընդմիջու առկայ Սփիւռքի երկրիմագիծ պատկերը:

Շրայր Խաչերեան տարիներ է ի վեր լուսանկարներով կը ցուցակագրէ աշխարհի տարածքին գտնուող հայկական եկեղեցիները: Յարդ ան շրջած է 44 երկիր, բազմաթիւ առիթներով այցելած է Արեւմտահայաստան, Շայաստան եւ Արցախ, ինչպէս նաեւ՝ Միջին Արեւելքի եւ Եւրոպայի գաւազան քաղաքներ:

Չանց առնելով «Սարդոստայններ՝ Մետաքսի ձամբուն վրայ» օրագրութեան անձնակազմը բաժնիները, թարգմանաբար եւ խմբագրուած ձեւով կը ներկայացնենք Շրայր Խաչերեանի ուղեւորի վկայութիւնները եւ նկարագրութիւնները: Այս էջը կ'ընդգրկէ Սիճկափորի եւ Շիճկափորի վերաբերող տեղեկութիւններ եւ լուսանկարներ (Պանկլատեչի, Թայլենտի եւ Աւստրալիոյ եկեղեցիներուն մասին տեսնել Երկուշաբթի օրուան թիւին մէջ):

Շրայր Խաչերեան 6 Փետրուարին «Հնդկահայ» վերնագիրով գիրք մը կը դնէ իր ճամպարակին մէջ եւ կ'ուղղուի Թորոնթոյն օդակայանը՝ բարեկամներու կողմէ տրամադրուած հասցէներով գինուած: Գիրքը կը բովանդակէ 1915ի Հայկական Յեղափոխութենէն ետք Մարագոյն Արեւելք այցելած եպիսկոպոսի մը գրի առած տեղեկութիւնները: Եպիսկոպոսին նպատակն էր դրամահաւաք կատարել՝ դէպի Հայաստան գաղթած տարագիրներուն համար:

Թորոնթոյնէն Լոս Անճելոս եւ Խաղաղականի վրայով դէպի Սիճկափոր ճամբորդութիւնը կը տեւէ երկու օր: Ժամանակին մարդիկ ամիսներով կը ճամբորդէին Մետաքսի ճամբան հասնելու համար...:

Նուաճ սարդոստայններուն վրայ:»

### ՊՈՒՄԵՅ

Նոյն գիշերը լուսանկարիչը կ'ուղղուի դէպի Հնդկաստան եւ էջը կը կատարէ Մուսկոյի (Պոմպէյ) օդակայանը: Առաւօտուն գերխնդրուած փողոցներէ անցնելով՝ ան ի վերջոյ կը հասնի քաղաքին միջնարեղին մէջ գտնուող հայկական Ս. Պետրոս եկեղեցին, որ թաքնուած է խիտ շէնքերու ետին:

Պոմպէյի հայկական Ս. Պետրոս եկեղեցին կառուցուած է 1796ին, յաջողակ իրանահայերու կողմէ, որոնք գոհարեղէնի եւ հնդկական կանեփի վաճառքով կը զբաղէին: Միջնարեղին դարպասին մօտ, ցուցատախտակի վրայ արձանագրութիւն մը կ'ակնարկէ այս եկեղեցիին գոյութեան: Ս. Պետրոսի ճարտարապետական կառուցը պարզ է: Վերջին ընթրիքը պատկերող գեղանկար մը կը զարդարէ անոր խորանը, իսկ կապոյտ առաստաղը աստեղագաղղ է:

Սուրբապի ուղղափառներ ամէն կիրակի պաշտամունք կը կատարեն այստեղ: Վերջին անգամ 1978ին եւ 1987ին հայեր մկրտուած են անոր աւազանին մէջ: Անոնցմէ մէկը՝ Թիւրիփ կ'աշխատի նորաձեւութեան մարգին մէջ՝ իբրեւ ընդդրուհի, եւ անոր նկարները կարելի է տեսնել Պոմպէյի տաճարէն, ցուցատախտակներուն վրայ: Թիւրիփի մայրը՝ Չապէլը, թերթի հարուածով մը սարդոստայններ վար առնելէ ետք՝ խորանին վարագոյրը կը բանայ լուսանկարիչին համար, «հաւանաբար վերջին անգամ», ինչպէս կը գրէ ան: Չապէլը Պոմպէյի վերջին հայերէն է, անոր աղջիկները ամուսնացած են հնդկներու հետ, ան եկեղեցիին միակ խնամակալն է եւ հոգատարը: Կայուածը իր յարակից շէնքով կը պատկանի էջմիածինի: Կարելի չէ գայն վաճառել եւ հասոյթը Հնդկաստանէն դուրս հանել:

Եկեղեցիին կից շէնքի մը երրորդ յարկին վրայ կը բնակի Կալկաթա ծնած յարի կին մը՝ Ռոզա էքմէեան, որուն ծնողները Հնդկաստան դաղթած են Պաքուէն: Ե՛նքին մէջ երկու այլ յարկաբաժիններ ծախու են եւ անոնց վաճառքէն գոյացած գումարը կրնայ ծառայել եկեղեցիին կանգուն պահելու: Հնդկահայերուն մեծամասնութիւնը թաղուած է Պոմպէյի մօտակայ Անթովի բլուրին վրայ:

### ՄԱՍԻՍ (ՉԵՆԱՅ)

Լուսանկարիչը 10 Փետրուարին կ'ուղեւորուի հնդկական Չենայ քաղաքը, ուր օդակայանէն 28 քմ. հեռու՝ Ճորձթառուի մէջ կը գտնուի Հայկական թաղամասը: Ինքնաշարժներ, կառքեր, հեծիկներ, փոխարդակառքեր կը բաժնեն նոյն փողոցները: Հայկական թաղամասին մէկ անկիւնը կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին: Անոր դիմաց մարդիկ առեւտուր կ'ընեն, մուրացկաններ կը թափառեն եւ ինքնաշարժներ կը սողովնին:

Գաւիթը կը կրէ 1712 թուականը: Իրականութեան մէջ անիկա կը պատկանի աւելի հին եկեղեցիի մը, որ քանդուած է, որովհետեւ բրիտանացիները չեն արտօնած միջնարեղին մօտ որեւէ այլ բարձր կառույցի մը գոյութիւնը: Հետեւաբար 1772ին կառուցուած է այժմու եկեղեցին, գերեզմանատան տարածքին վրայ: Մինչեւ այսօր եկեղեցիին մուտքէն ներս կը տարածուի հայկական արձանագրութիւններով տապանաքարեր, որոնց մեծ մասին վրայ փորագրուած է գանձ մը եւ ոսկորներ: Լուսանկարիչը տանիք կը բարձրանայ «Նկարելու համար գեղեցիկ եկեղեցին եւ անոր նոյնքան գեղեցիկ գաւազակատուը, որ ունի 6 գաւազակներ»:

Ս. Աստուածածինի եկեղեցիին պահպանը Մայքըլ Սթիֆթըն անունով երիտասարդ մըն է, որուն մայրը հայ է, իսկ 87ամեայ հայրը մինչեւ 4 տարի առաջ կը կատարէր այդ պաշտօնը: Մայքըլ լաւ ծանօթ է Հնդկահայոց պատմութեան եւ տեղեկութիւններ կ'ու տայ եկեղեցիին վերաբերեալ: Ան կը պատմէ, թէ մեծ մասամբ իրանահայեր, որոնք 17րդ եւ 18րդ դարերուն գոհարեղէնի, մետաքսի եւ համեմուտեան առեւտուրով հարստացած էին, աւանդութեան համաձայն, եկեղեցի մը կառուցած էին:

Ս. Աստուածածինի ներքնամասը բառանկարն է:

է: Անոր բարձր խորանը կառուցուած է դէպի արեւելք եւ զարդարուած է Ս. Աստուածածինի գեղանկարով, որուն մէջ Աստուածամայրը կ'երեւի օդին մէջ, մինչ վարը մարդիկ իրենց հայեացքը ուղղած են վեր: Զուսահեալ գեղանկարներ կը պատմեն Քրիստոսի պատմութիւնը: «Նստաբաններու երկու շարքեր եւ հովհարներ եկեղեցի կը վերածեն պաշտմունքի պարզ վայրի մը»: Դուրը աւելի քան 350 տապանաքարեր կ'առաջնորդեն դէպի պարտէզ եւ գանձակատուն:

Չանգակատունէն ոչ շատ հեռու թաղուած է Հայր Յարութիւն Շմաւոնեան, որ Շիրագէն (Իրան) Մատրաս փոխադրուած է եւ 1794ին հիմնած է հայկական առաջին թերթը՝ «Ազդարար»: Ան մահացած է 1824ին:

Ականաւոր եւ հարուստ այլ հայեր եւ թաղուած են Ս. Աստուածածինի գերեզմանատան մէջ: Անոնց շարքին են Խոճա Պետրոս Ոսկան (առեւտրական), Աղա Շամիր Սուլթանուսեան (ոսկերիչ), որ ծնած է 1773ին՝ Զուգա: «Եւրոպք երկար է», կը գրէ Շրայր Խաչերեան:

Մայքըլ կը պատմէ, թէ ամէն ամիս շուրջ 15 զբօսաշրջիկ կ'այցելէ եկեղեցի: Երկու վարձակալներէ (մէկը՝ գրավաճառ) գանձուած վարձքը բաւարար է եկեղեցին բաց պահելու համար: «Այս գեղեցիկ եկեղեցին կառուցուած է հարիւրաւոր հայերու քանքերով, սակայն ներկայիս զայն պահող միայն երկու հայեր մնացած են», կը գրէ լուսանկարիչը: Այսուհանդերձ ան բարձր տրամադրութեամբ կը մեկնի՝ «տեսնելով Ս. Աստուածածինի լաւ վիճակը եւ անոր պահպաններուն հոգածութիւնը»:

### ՏԵՆԷՒ, ԱԳՐԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ԵՒ ՄԱՏՈՒՈՒՐ

Օղատուր 11 Փետրուարի գիշերը էջը կը կատարէ Տենէի: Յաջորդ առաւօտ լուսանկարիչը կ'ուղղուի դէպի Ագրայի հայկական գերեզմանատունը, որ իբրեւ պատմական տարածք պետական հոգածութիւն կը վայելէ: Տապանաքարեր կը կրեն հին թուականներ. 1611, 1613, 1614, 1615, 1616, 1620, 1623... 1655... 162... 1678... 1701... 1815... 1826... 1849...:

Մերովի ձէջըպ Սէթի «Արմինիընդ ին Ին-տիա» (1937) գիրքը, որ իբրեւ ուղեցուց կը ծառայէ լուսանկարիչին, տեղեկութիւններ կը բովանդակէ գերեզմանատան, ինչպէս նաեւ տեղւոյն հայկական տապանաքարերը վերծանելու մասին: Օրինակ, ձէյմը Մարքը հայկական Մկրտիչն է...: «Նետաքրքրակն է նաեւ այստեղ թաղուած հայերու ձեւերը կը ծնուի իր յարակցութիւնը այս երկրի հետ. Պիթիս, Վեներիկ, Արաբկիր, Կարս, Երեւան, Թիֆլիս, Պոլիս, Ղարաբաղ, Քապուլ, սակայն Զուգան այս ցանկին գազաթիւն կը գտնուի», կը գրէ լուսանկարիչը: Ան գարմանքով կը նշէ, թէ արձանագրութիւններ մեծ մասամբ լաւ պահպանուած է:

Հիւսիսարեւելի Հնդկաստանի բրիտանացիական առաջին մատուցող հայկական է եւ կառուցուած է Ագրայի գերեզմանատան մէջ, 1611ին: Անիկա կը կոչուի Ս. Մարտիրոս: Մատուցող հնգանկար կառուց մըն է, որուն խաչը անհետացած է: Պատուհանները զարդարու են եւ հիանալի շուքեր կը ձգեն գետին, ինչպէս նաեւ՝ պատը ծածկող սալերուն վրայ: Գետինը հայերէն եւ մեծ մասամբ անգլերէն արձանագրութիւններ կան:

Մարտիրոս անունով հարուստ հայ մը, որ Զուգանի Փիրպաշին գաւազն էր իր անունով կառուցած էր այս մատուցող: Անոր մարմարէ տապանաքարին վրայ շուրջ թափելով՝ լուսանկարիչը կարդացած է, թէ Խուստա Մորթենեփուս հայ մըն էր, Քրիստոսի երդուեալ առաքեալ մը, ուղղամիտ մարդ մը: Ան իր ունեցածը կու տար աղքատներուն, իբրեւ հաւատարմութեան ասպացոյց՝ իր պաշտած տիրոջ:

### ԿԱԼԿԱԹԱ

Դէպի Կալկաթա ուղեւորութիւնը 12 Փետրուարին կը դասաւորուի Հայաստանի դեսպանատան միջոցով, ուր կ'ապրին Տենիփի միակ հայերը: Հայր Ղեւոնդ 9 ամիս առաջ նշանակուած է Հնդկաստանի մէջ հայ կրօնական ներկայացուցիչ եւ յաջորդ օր Կալկաթայի հայկական վարձակալին մէջ կը բնակին շուրջ 100 հայեր, իսկ տեղւոյն հայկական դպրոցին 60 աշակերտները հայաստանցի անտէր մանուկներ են: Կալկաթայի երեքմիս հարուստ հայերուն կտակած հարստութիւնը բաւարար է դպրոցը կանգուն պահելու:

Ոճորդուած կրպակներով նեղ թաղ մը կ'առաջնորդէ դէպի Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցին, որ Աղա Նազարէթ լուսանկարիչը կը կողմէ կառուցուած է հայկական գերեզմանատան տարածքին վրայ, 1724ին: Քառանկարն սպիտակ եկեղեցին գմբէթ չունի, իսկ անոր գանգակատան վրայ ժամացոյցներ գետեղուած են 1734ին: Հայկական եկեղեցիներու աւանդութեան տարբեր է այս եկեղեցիին ճարտարապետական նախագծումը, սակայն անիկա բաւական ընդարձակ է, եւ կը թուի, թէ բարձր խաւի հայերու

աղօթաբայրը եղած է, որովհետեւ աթոռները առանձին են, շինուած՝ վարդեփի փայտէ, ծուկի կամ ոտքի յատուկ առանձին յենարաններով, որոնք սեւ ներկուած են:

Սըր Նաչիկ Փոյ Չեթրը, 1846ին Կալկաթա ծնած հայ մը, պատանի տարիքին Հոնկ Բոնկ փոխադրուած է եւ հարստացած է: Իր մահէն ետք ան իր հսկայական հարստութեան մեծ մասը կտակած է Կալկաթայի հայ համայնքին՝ ապահովելով անոր կառուցներուն դոյատեւումը մինչեւ այսօր... նաեւ Համայնքին մէջ վէճերու առիթ տալով, ինչպէս նկատած է լուսանկարիչը: Չեթրը ընտանիքին դամբարաններուն տապանաքարերը կը գտնուին անոր անունը կրող ծերանոցին կից (անոնք թաղուած են Հոնկ Բոնկ): Չեթրի մահը մահացած է 20 տարեկանին, անոր երկու աղջիկներէն մէկը՝ 22 տարեկանին, իսկ միւսը՝ 24 տարեկանին, կինը՝ 40 տարեկանին, իսկ ինք 48 տարեկանին խեղդուած է գետին մէջ: Մերովի ձէջըպ Սէթի եւ այստեղ թաղուած է:

Կալկաթայի ծերանոցին մէջ, ուր այժմ 18 ծերեր կ'ապրին, լուսանկարիչը կը հանդիպի հայ ծերունիներու: Անոնցմէ մէկը՝ 79ամեայ Չաչան կամ Մարիզ Սարգիս (Խաչատուր Սարգիս Խաչատուրեան) ծնած է Զուգա, 1921ին եւ Հնդկաստան տեղափոխուած է 1934ի Դեկտեմբերին, 7 տարի յաճախած է Կալկաթայի հայկական վարժարանը եւ 1935էն 1982 խախտած է տեղւոյն անհաջողակ լուսանկարչի միջոցով: Ան բժախոյր վերակազմուած է Սըր Նաչիկ Փոյ Չեթրը ծերանոցին եւ անոր յարակից գերեզմանատան:

Կալկաթայի մէջ կայ նաեւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, յարակից նոր գերեզմանատունով, ուր թաղուած են 1905էն ետք մահացած հայերը:

Լուսանկարիչը 14 Փետրուարին 126 քմ. ճամբայ կը կտրէ Կալկաթա փոխտուրքէ ետք կը գտնէ Չինսուրաֆի Ս. Յովհաննէս եկեղեցին, որ «պարտէզի մը մէջ սպիտակ հրեշտակի կը նմանի», ինչպէս կը նկարագրէ ան: Անիկա Ս. Նազարէթի նման քառանկարն է եւ դմբէթագուրկ, իսկ խորանը զարդարուած է գեղանկարներով: Կ'ըսուի, թէ գերմանացի մը 5 միլիոն տոլար առաջարկած է Ս. Յովհաննէսի խորանը զարդարող մեծաղբի գեղանկարին համար, սակայն համայնքը մերժած է վաճառել գայն:

Ս. Յովհաննէս եկեղեցին, գայն չըջապատող ծաղիկներով եւ ծառերով, ինչպէս նաեւ Սըր Նաչիկ Փոյ Չեթրը ծերանոցն ու Ս. Նազարէթ եկեղեցին մեծ խնամքով պահպանուած են շնորհիւ Չաչայի եւ Սոնիա Մարթինի, որ հայ համայնքին խնամակալն է: Չաչա իր սերունդին վերջին ներկայացուցիչներէն է եւ կը մերժէ



Մատրասի Ա. Աստուածածին եկեղեցւոյ մուտքը: (Լուսանկարները՝ Շրայր Բագէ Խաչերեանի)


Աւստրալիա հաստատուած իր աղջկան հրահանգները: Անոր պիւստոյն նպատակն է համայնքին եկեղեցիները եւ կառուցները ապահով կերպով փոխանցել էջմիածինի կաթողիկոսութեան:

Ս. Յովհաննէսը Պենկալի շրջանին մէջ Երուսաղիմ (մօտակայ գետին անունով) արուարձանին երկրորդ հնագոյն եկեղեցին է: Հիմնուած է 1695ին, Խոճա Յովհաննէս անունով հայու մը կողմէ, որ մահացած է հիմնադրութենէն երկու տարի ետք: Անոր եղբայրը՝ Յովսէփ հետագային շարունակած է եկեղեցիին կառուցումը, գայն նուիրելով Ս. Յովհաննէս Մկրտիչի, ի յիշատակ՝ իր եղբոր, որ թաղուած է եկեղեցիին մէջ: Ամեն տարի, Յունուարին, Կալկաթայէն ուխտագնացութիւն մը կը կատարուի դէպի այս եկեղեցին:

Ս. Յովհաննէս եկեղեցիին շրջապատին մէջ քաղաքի զգալի գերեզմաններ կան: Անոնցմէ մէկը կը պատկանի Ղարաբաղի վերջին անկախ մելիքին՝ Դաւիթ Յրիտոն Մելիք Բեգլարի, որ մահացած է 1884ին:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ԵՌՆԻՍԵՖԻ ԿՈՂՄԵ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱՏ ՄՐՅՈՒՄՆԵՐ

## ՌՈՆԱԼՏՕ ՆՇԱՆԱԿԵՑ ՀԻՆԳ ԿՈԼ, ԻՍԿ ՇՈՒՄԱԽԵՐ՝ ՄԵԿ ԿՈԼ



Չախէն աջ՝ Ռոնալտո, Շումախըր եւ Զիբո:

11 մասուն բացակայութենէ մը ետք պարզիցի յառաջապահ Ռոնալտո երէկ վերադարձաւ դաշտ, ուր Մարաթա զաշտին վրայ (Պրագի) տեղի ունեցած մրցումին, իր մասնակցութիւնը բերաւ ԵՌՆԻՍԵՖԻ ԿՈՂՄԵ կազմակերպուած Ֆուլթայլի բարեսիրական մրցումի մը ընթացքին:

24 տարեկան Ռոնալտո, որ իրեն խմբակից ունէր Ֆորմիլա 1-ի վարորդ գերմանացի Միքայէլ Շումախըրը, ունեցաւ յաջող վերադարձ մը, նկատի ունենալով, որ ան նշանակեց հինգ կոլ, երկուբը՝ Ա. Կիսախաղին:

Գալով Շումախըրի, որ այս մրցումին կը մասնակցէր, պատրաստուելու համար այս կիրակի օր տեղի ունենալիք Պրագիի կրակ վրայի, թէեւ Բ. Կիսախաղին փնտրելով յաջողեցաւ կոլ մը նշանակել, սակայն ան կորսնցուց կոլ նշանակելու բազմաթիւ առիթներ, որոնք պատրաստուած էին Ռոնալտոյի եւ պարզիցի նախկին յառաջապահ Զիբոյի կողմէ:

Մրցումին ետք, Ռոնալտո յայտարարեց, թէ հակառակ անոր կողմէ կորսուած այդ առիթներուն, ինք մեծ հաճոյք գգացած է Շումախըրի հետ դաշտ ներկայանալով:

Մրցումին ներկայ էր 40 հազար համակիր:

## ՄԱՐԶԻԳՆԵՐՈՒ ԱՌՕՐԵԱՅԷՆ

● ԳԵՐԱՄԱՆԻՅԱ Ֆուլթայլի ազգային խումբին մարզիչ Ռուբի Կէօլըր պաշտօնակալն համաձայնագիր ստորագրեց Գերմանիոյ ֆուլթայլի ֆետերասիոնին հետ, այսպիսով դառնալով իր երկրին ֆուլթայլի խումբին մարզիչը եւ իր պաշտօնին վրայ մնալով 2002ի Մոնտիալէն ետք ալ:

40 տարեկան Կէօլըր, նախկին մարզիչ Էրիշ Ռիպիցի պաշտօնէն հեռացումէն ետք, նշանակուած էր Գերմանիոյ առժամեայ մարզիչ, այսինքն մինչեւ Գերմանիոյ ֆուլթայլի ախոյեանութեան (Պունտալիա) 2000-2001 եղանակին ամառը, որմէ ետք Քրիսթոֆ Տոմպիտի ստանձնէր այդ պաշտօնը: Սակայն Տոմ ոչ թէ միայն Գերմանիոյ մարզիչ չէր կրցած նշանակուիլ, այլև կորսնցուցած էր Պայէր Լեւերքուզընի մարզիչի իր պաշտօնը, թմրեցուցիչ գործածած ըլլալուն համար:

Գերմանիա, որ Կէօլըրի հետ 2002ի Մոնտիալի պտուածի մրցումներուն չորսին ալ յաղթանակ արձանագրեց, այժմ գրեթէ ապահոված կը թուի ըլլալ ձափոնի եւ հարաւային Բորէայի իր տոմարը:

Կէօլըրի օգնականը՝ Միքայէլ Սքիպէ իր կարգին նոր պայմանագրութիւն մը ստորագրեց Գերմանիոյ ֆուլթայլի ֆետերասիոնին հետ, մինչեւ 2004 թուական:

● ԱՆԳԼԻՅԱ Ֆուլթայլի ազգային խումբին նախկին մարզիչ Կրիսթիան Թէյլըր, որ այժմ Ուաթֆորտի (Ա. Պասակարգ) մարզիչն է, այս եղանակի աւարտին պիտի լքէ մարզիչի ասպարէզը, յայտնեցին անոր ակումբին պատասխանատուները:

56 տարեկան Թէյլըր, որ 1990էն 1993 եղած է Անգլիոյ ֆուլթայլի ազգային խումբին մարզիչը, եղած է նաեւ Լինքոլնի, Ուաթֆորտի, Ասթոն Վիլայի եւ Վուլվիչի մարզիչն ալ:

Հակառակ անոր որ Թէյլըր անգլիական մամուլին եւ համակիրներուն կողմէ քննադատուեցաւ, երբ Անգլիան չկրցաւ հասցնել 1994ի Մոնտիալին, սակայն Ուաթֆորտի հետ իր առաջին պաշտօնավարութեան ընթացքին (1977էն 1982) ակումբը Գ. Պասակարգէն բարձրացուց Ա. դասակարգ:

Այժմ անոր կազմը մաս կը կազմէ Ա. դասակարգի (8րդ) եւ կը պայքարի բարձրագոյն դասակարգ բարձրանալու համար փէյթօֆի տոմար ապահովել:

● ՅԻՐԱՆՍԱՅԻ ֆուլթայլի ազգային խումբին մարզիչ Ռոմէ Լըմէր իր կազմին կրած վերջին պարտութենէն ետք (Սպանիայէն, 2-1 արդիւնքով), թղթակիցներուն հետ իր կատարած հարցազրուցին ընթացքին ըսաւ, թէ մտահոգ է իր կազմին կրած պարտութենէն, սակայն այդ ձեւը պատճառ դարձաւ, որ ան խումբին կարգ մը տկար կէտերը լաւատես սերտէ եւ ըստ այնմ սրբագրութիւններ կատարէ, յառաջիկային նման ձախողութիւններ չարձանագրելու համար:

Վալենսիայի մէջ տեղի ունեցած մրցումին, Սպանիա ոչ թէ միայն 20 տարի սպասումէ ետք պարտութեան մատնած էր աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Ֆրանսան, այլ վերջ մը դրած էր Ֆրանսայի անպարտելիութեան, որ 10 մրցումէ պարտութիւն չէր կրած:

## 2002ի ՄՈՆՏԻԱԼԻ ԶՏՈՒՄ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՕՏԻՆ ՆԵՐՄ - ԱՐԺԱՆԹԻՆ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ԿԵՆԵԶՈՒԵԼԼԱՆ - ՊՐԱԶԻԼ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ ԷՐՈՒԱՏՈՐԵՆ

Հարաւային Ամերիկայի գօտիէն ներս տեղի ունեցող 2002ի Մոնտիալի գտումի մրցումներուն, Արժանթին ամրապնդեց պարագլուխի իր դիրքը, Պոնտիալ Արժանթին մէջ 5-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելէ ետք խմբակին վերջին դիրքը գրաւող Վենեսուելան, որ այսպիսով կրցաւ իր 10րդ պարտութիւնը. անիկա արձանագրած է միայն մէկ յաղթանակ:

Թէեւ մրցումին արդիւնքը յիշատակելի եղաւ յաղթական կազմին համար, սակայն այլ ուշադրաւ երեւոյթ մը եղաւ Տիեֆէ Կո Սիմէոնէի Արժանթինի ֆուլթայլի ազգային խումբին շապիկը կրելը՝ 100րդ անգամ ըլլալով, նկատի ունենալով, որ նախապէս ոեւէ մարզիկ այդ մէկը չէր իրագործած: Առաջին անգամ Սիմէոնէի ազգային խումբին շապիկը կրած էր 1988ին, երբ անոր կազմը 4-1 արդիւնքով պարտութիւն մը կրած էր:

Վենեսուելայի դէմ տեղի ունեցած մրցումին Սիմէոնէ, որ խումբին խմբապետն էր, կը տօնէր իր ծննդեան 31րդ տարեդարձը:

Արժանթինի հինգ անպատասխան կողերը նշանակեցին Հերնան Բրեսթի (13րդ), Նուան Փայո Անիէլի (31րդ), Նուան Սեպատիան Վերոն (51րդ), Մարսելո Կալարսո (60րդ) եւ Ուոլթըր Սամուէլ (85րդ):

11րդ հանգրուանի մրցումներուն անակնկալ արդիւնք արձանագրող կազմը եղաւ Էքուատոր, որ իր դաշտին վրայ (Քուրթիթոյի մէջ) 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Պրագիլը, չնուիր Ակոսթէն Տելատոյի նշանակած կոլին (49րդ):

Այսպիսով, երկու կազմերուն միջեւ տեղի ունեցող 22րդ հանդիպումին Էքուատոր յաջողեցաւ 4րդ անգամ պարտութեան մատնել Պրագիլը:

Մոնտիալի սկսումէն ի վեր միշտ ալ մրցաշարքին իր մասնակցութիւնը բերած Պրագիլ, որ կրեց իր 3րդ պարտութիւնը, այժմ կը գրաւէ 3րդ դիրքը, ութ կէտով ետ մնալով Արժանթինէն:

Իսկ Էքուատոր, որ երբեք բախտը չէ ունեցած



Հերնան Բրեսթի, որ նշանակեց Արժանթինի առաջին կոլը:

Մոնտիալին մասնակցելու, այժմ կը գրաւէ 4րդ դիրքը, մէկ կէտով ետ մնալով Պրագիլէն:

Չտուածի մրցումներուն աւարտին, առաջին չորս դիրքերը գրաւող կազմերը կ'ապահովեն 2002ի Մոնտիալին իրենց տոմարը, իսկ 5րդ դիրքը գրաւող կազմը, փէյթօֆի մրցում կը կատարէ Ուոլթըր Սեպատիան Վերոն գրաւող կազմին հետ 5րդ տոմարին համար:

3րդ դիրքը գրաւող Փարակուէյ, 1-0 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Մոնթեվիտոյէն, երեք կէտի առաւելութիւն մը ունեցաւ Պրագիլի վրայ: Ուրուկուէյի դէմ տեղի

ունեցած մրցումին, Փարակուէյի կոլը նշանակեց Կուրտո Ալվարեսիկա (63րդ):

Իր կարգին, Քոլոմպիա 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց պարտութեան մատնելէ ետք Պոլիվիան: Նուան Փայո Անիէլի նշանակեց Քոլոմպիոյ կոլերը (53րդ եւ 73րդ՝ փենալթիով):

5րդ եւ վերջին մրցումին, Փերու, Լիմայի մէջ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Զիլին:

Ֆրանսիա Մաքսիմի (54րդ), Անտրէս Մենտոզա (73րդ) եւ Քլաուսիո Փիգարո (81րդ) նշանակեցին Փերուի կոլերը, իսկ Ռէնալտո Նաւիա Չիլիի կոլը (62րդ):

### Ստորեւ՝ դասաւորումը:

	Կէտ
1. Արժանթին	28 (27-8)
2. Փարակուէյ	23 (19-9)
3. Պրագիլ	20 (21-10)
4. Էքուատոր	19 (13-14)
5. Քոլոմպիա	18 (10-7)
6. Ուրուկուէյ	15 (12-8)
7. Փերու	11 (10-14)
8. Չիլի	10 (12-16)
9. Պոլիվիա	9 (5-16)
10. Վենեսուելա	3 (6-33)

### Ստորեւ՝ կոլաւորումները:

1. Ռոմարիո (Պրագիլ) 7 կոլ  
2. Ռիվալտո (Պրագիլ), Ակոսթէն Տելատո (Էքուատոր) եւ Հերնան Բրեսթի (Արժանթին) 5ական կոլ  
3. Կապրիէլ Պասիստրա (Արժանթին), Իվան Սամորանո (Չիլի) եւ Նուան Սեպատիան Վերոն (Արժանթին) 4ական կոլ:

Ստորեւ՝ դասաւորումը:	Կէտ
1. Արժանթին	28 (27-8)
2. Փարակուէյ	23 (19-9)
3. Պրագիլ	20 (21-10)
4. Էքուատոր	19 (13-14)
5. Քոլոմպիա	18 (10-7)
6. Ուրուկուէյ	15 (12-8)
7. Փերու	11 (10-14)
8. Չիլի	10 (12-16)
9. Պոլիվիա	9 (5-16)
10. Վենեսուելա	3 (6-33)

## ՊՈՒՆՏԵԼԻԿԱ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԿՍԻ 27ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Գերմանիոյ ֆուլթայլի ախոյեանութեան (Պունտալիա) 27րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր տեղի կ'ունենայ Վոլֆսպուրտի - Հանզա Ռոսթոք մրցումը, մինչդեռ Վոլֆսպուրտի մրցումները տեղի կ'ունենան վաղը Շաբաթ եւ կիրակի:

9րդ դիրքը գրաւող Վոլֆսպուրտի, որ Ա. դասակարգ բարձրանալէն ի վեր (1997ին) իր դաշտին վրայ պարտութիւն չէ կրած Ռոսթոքէն (12րդ), դաշտ պիտի ներկայանայ առանց լեզ յառաջապահ Անտրէյ Երեմչուկի (Վոլֆսպուրտ): Հիւր կազմը իր կարգին ունի շատ մը վերաւոր մարզիկներ, որոնց կարգին՝ եգիպտացի միջնապահ Եասէր Ռատուան: Պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միլնիթի, որ այժմ երեք կէտի առաւելութիւն մը ունի Պայէր Լեւերքուզընի (2րդ) եւ Քայզերսլաութըրնի (3րդ)

վրայ, պիտի հիւրընկալէ Վերտըր Պրեմընը (8րդ), որ 12 կէտով ետ կը մնայ Պայէրնէն:

Երկու խումբերն ալ ունենալիս կ'ապահովեն մարզիկներ: Պայէրնէն պիտի բացակայի Սեւէմէ Շոյ, իսկ Պրեմընէն՝ Տապիան Էրնսթ: Պայէր Լեւերքուզըն, որ պիտի հիւրընկալէ Շաբաթ (5րդ) իր կարգին պիտի ընէ որեւէ անակնկալի դիմաց չգտնուելու համար, որովհետեւ անոր կազմին պիտի բացակային Միքայէլ Պայաք եւ Ռոպէր Բոլաք (կախակցութեան):

Քայզերսլաութըն ղեկավար մրցումը մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Պորուսիա Տորթմունտը (4րդ): Վերջին անգամ Տորթմունտ 1987ին յաղթական հեռացած էր Քայզերսլաութընի դաշտէն, արձանագրելով 3-2 արդիւնք մը:

Ստորեւ՝ 27րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

Ստորեւ՝ 27րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

● ԱՅՍՕՐ  
Վոլֆսպուրտի - Հանզա Ռոսթոք  
● ՎՄՍԸ  
Հերթա Պրեմըն - 1860 Միլնիթ  
Տորթմունտ - Քեօլն  
Համպուրտի - Ուերթերմիլի  
Ֆրայպուրտի - Այնքալթա  
Պայէրն Միլնիթ - Վերտըր Պրեմըն  
Պայէր Լեւերքուզըն - Շաբաթ  
● ԿԻՐԱԿ  
Քայզերսլաութըն - Պորուսիա Տորթմունտ  
Պոլսում - Քոպպուս

## ՊԱՍԲԵԹՊՈՒԼ ԷՆ. ՊԻ. ԷՅ.

### ԼԵՅԸՐԶ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ

ԷՆ. ՊԻ. Էյ-ի երէկուան մրցումներուն, Ասլանտեան գօտիի (Արեւելեան շրջան) պարագլուխի դիրքը գրաւող Ֆիլատելֆիա Սիքսթրա իր դաշտին վրայ կրեց եղանակի իր 22րդ պարտութիւնը, իր հիւրէն Օրլանտո Մէճիքէն, 96-95 արդիւնքով: Յաղթական կազմին մարզիկ Թրէյսի Մաքլիթլի, որ մրցումին աւարտէն քանի մը երկվարկեան առաջ նշանակեց իր կազմին յաղթանակի կէտերը. այսպիսով մրցումին ընթացքին նշանակեց 44 կէտ, 9 ռիպուստին: Էլըն Իվըրսըն (Սիքսթրա) նշանակեց 37 կէտ:

Լու Անճելըսի մէջ, Լէյքըր 108-84 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Սաքրամենթո Քինկլէն, շնորհիւ Քրիս Ուեյթիի նշանակած 25 կէտին եւ 12 ռիպուստին: Անոր խմբակից Փէյա Սթոյաքովիչ նշանակեց 22 կէտ:

Լէյքըրու կը բացակայէր Քուպէ Պայլընք (Վիրալ): Անոր խմբակից Շաքիլ Օնիլ նշանակեց 33 կէտ եւ 11 ռիպուստ:

Ֆէօնիքս Սանյ 103-94 արդիւնքով պարտութեան մատնեց Քլիվլէնտ Քավալիըր: Սանյի մարզիկ Ճէյսըն Քիտ նշանակեց 29 կէտ, 10 ռիպուստ:

Երէկուան տեղի ունեցած մրցումներէն ետք, ցարդ Ֆիլատելֆիա Սիքսթրա, Միլուոքի Պաքս եւ Սան Անթոնիո Սփըրզ կը մնան միակ կազմերը, որոնք ապահոված են փէյթօֆի մրցումներուն իրենց տոմարը:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.	Նիւ Ճըրջի Նէթս - Տենիսը Նակէթս	99-96
Օրլանտո Մէճիք - Ֆիլատելֆիա Սիքսթրա	96-95	
Ֆէօնիքս Սանյ - Քլիվլէնտ Քավալիըր	103-94	
Տալաս Մալըրիքս - Փորթլէնտ Թրէյլ Պլէյզըրզ	94-84	
Սիեթլ Սիւփըրսոնիքս - Մինեսոթա Վուլվզ	94-93	
Սաքրամենթո Քինկլ - Լու Անճելըս Լէյքըր	108-84	

## ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

(Ասլանտեան գօտի)	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
1.- Ֆիլատելֆիա Սիքսթրա	49	22
2.- Մայնմի Հիթ	42	28
3.- Նիւ Եորք Նիքս	42	28
4.- Օրլանտո Մէճիք	39	32
5.- Պոսթըմ Սելթիքս	32	38
6.- Նիւ Ճըրջի Նէթս	25	49
7.- Ուաշինգթըն Ուիզարտ	17	54

(Կենտրոնական գօտի)	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
1.- Միլուոքի Պաքս	44	26
2.- Շարլոթ Հորնէթս	40	31
3.- Թորոնթօ Ռեփթըրզ	39	32
4.- Ինտիանա Փէյլըրզ	32	38
5.- Էլիվլէնտ Քավալիըր	26	45
6.- Տիքսոն Փիլաթընզ	25	46
7.- Աթլանթա Հոքս	21	51
8.- Շիքագօ Պուլզ	12	58

(Միջառնամտեան գօտի)	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
1.- Սան Անթոնիո Սփըրզ	50	21
2.- Եուրա Ճէզ	47	23
3.- Սպաս Մալըրիքս	46	25
4.- Տիքսոն Փիլաթընզ	42	29
5.- Հիւսթըն Ռոքէթս	39	32
6.- Տենիսը Նակէթս	34	38
7.- Վանքուվըր Կրիկիթ	20	52

(Խաղաղական գօտի)	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
1.- Սաքրամենթո Քինկլ	48	22
2.- Լու Աճճելըս Լէյքըր	47	25
3.- Փորթլէնտ Թրէյլ Պլէյզըրզ	46	25
4.- Ֆէօնիքս Սանյ	43	27
5.- Սիեթլ Սիւփըրսոնիքս	40	27
6.- Լու Աճճելըս Էլիվլըր	26	46
7.- Կոլորադօ Սթէյթ Ուորիըրզ	17	53

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:  
Կո

# ԻՆԹԻՑԱՏԱՆ ՊԻՏԻ...

Շարունակումս Ա. Էջեմ

## ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀՐԱԺԱՐԱԾ ԵՆ ՔԻՌԹՈՅԻ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԵՆ

Մ. Նահանգներու Սպիտակ Տունը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Մ. Նահանգներ գործնապէս հրաժարած են 1997ի Քիրթոյի համաձայնագրին՝ ընդհանրական ջերմացումի դէմ պայքարելու համար, մինչ անհիշուելու պահի մէջ առանցքային կը նկատուի Մ. Նահանգներ - Ե. Միութիւն յարաբերութեան համար:

Երէկ, նախագահ Ճորճ Պուշ Բաշըմարի կողմէրէքննադատութիւններու ենթարկուեցաւ:

Ե. Միութիւնը յայտնեց, թէ «չափ մտահոգ է» ամերիկեան որոշումով, ձափոն կող ուղղուող Ուաշինկթընի, որ վերատեսուեցեան ենթարկէ իր որոշումը, իսկ Աւստրալիա աշխարհի հարստութիւնները ամէնէն աւելի պահանջները ունենցող երկրներն են, թէ պատասխանատուութիւն մը ունին՝ ջերմանոցի կազմակերպման արձակումները կրճատելու գծով:

Պաշտպանական ուղիներու մէջ կողմնակիցութիւնները, որոնք արդէն քանդուածներ կը դիմագրաւեն ուղիներու ջերմանոցի մակարդակին բարձրացումին, սաստիկ մը իրենց եւ երաշխանքներու պատճառով, յայտնած են, թէ իրենց գոյատեւումը նմար վրայ է:

Քիրթոյի կենսոլորտի նախարար Մաքքը Սիլըրը, յայտնած է, թէ ամերիկեան որոշումը «չափազանց մտահոգիչ է»:

### «ԼԱԻԱԳՈՅՆ ԶԱՇՏՐՈՒՆ Ի ՆՊԱՍՏ ԶԵ»

Սպիտակ Տան բանբեր Արի Ֆլէշըր Չորեքշաբթի օր յայտնած է, թէ նախագահ Պուշ գործովի չի կանգնիր Քիրթոյի համաձայնագրին: «Անիկա Մ. Նահանգներու տնտեսական լաւագոյն շահերուն ի նպաստ է», ըսած է ան թղթակիցներու:

Կենսոլորտի պաշտպաններ կը յայտնեն, թէ Մ. Նահանգներ աշխարհի բնակչութեան միայն 6 առ հարիւրը ունին, սակայն անոնք աշխարհի ջերմանոցի կազմակերպման մէջ չորրորդը կ'արտադրեն:

ՄԱԿի համաձայնագրին համաձայնութիւն տուած է ին նախկին նախագահ Պիլ Քլինթըն եւ ճարտարարուեստականացած այլ երկիրներու ղեկավարներ, սակայն անիկա ամերիկեան Մերակոյտին կողմէ չէ վաւերացած:

Անոր համաձայն, մեծ պետութիւնները պէտք է մինչեւ 2012 կրճատեն ջերմանոցի կազմակերպման արտադրութիւնները, որոնք արդիւնք են զլիւստարար անոնքի եւ քարիւղի այրելուն՝ միջին հաշուով 5,2 առ հարիւրով բաղադրուած 1990ի արտադրութիւններուն:

Գիտնականներու կարծիքով, այդ կազմակերպման միջոցով մէջ ջերմանոցի կը բանտարկեն եւ մեծ դերակատարութիւն ունին ընդհանրական ջերմացումին մէջ, որ կրնայ կլիմայական ազդեցութիւնները փոփոխելու պատճառով:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՆԱԽԱԳԱԸ ԼԱՌՈՒՏԻ...

Շարունակումս 2րդ էջէն

թեան ընդհանուր տնտեսական Սամիթի Ռայթըր եւ ընկերային հարցերու նախարարութեան ընդհանուր տնտեսական Սամիթի Բանաստեղծ:

Նախագահ Լաիտու ընկերային եւ տնտեսական հարցերու խորհուրդի նախագահ Ռոնէ Նասանաի հետ ընդհանուր խորհուրդի աշխատանքներն ու կարիքները, որպէսզի կարենայ ապահովել տարբեր բնագաւառներու եւ խաւերու մասնակցութիւնը պետութեան տնտեսական եւ ընկերային քաղաքականութեան պատրաստութեան, իր խորհուրդներով ու առաջարկներով:

Նախագահ Լաիտու ըսաւ, որ խորհուրդը պէտք է ներկայացնէ տեղեկագիրներ երկրի տնտեսական եւ ընկերային միջավայրի մասին, մասնաւոր իր այս պայմաններուն մէջ բոլոր կողմերը պէտք է մասնակցին տնտեսական վերահաստատման:

Նախագահ Լաիտու Ամմանէն վերադարձը շնորհաւորելու համար երէկ անոր հեռաձայնեցին շիիներու Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտալ Ամիր Քալաֆին եւ շէյխ Մոհամէտ Հուսէյն Ֆատալայի:

Հրպայալի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նարայիա երէկ հեռաձայնեց նախագահ Լաիտուի, եւ խօսակցութեան ընթացքին յրուստեց Արաբական Լիգայի գերատեսչական ժողովին արտասանուած իր խօսքին մէջ նախագահ Լաիտուի կեցումները, շնորհաւորելով յարգը գերատեսչական Պէյրութի մէջ գումարելու որոշումը:

## ՄԵԾԻ ԻՍԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ...

Շարունակումս՝ 5րդ էջէն

որպէս սեփական դատ: Ազգ. Ընդհանուր Ժողովներու, Ազգ. Կեդրոնական Վարչութեան խառն ժողովներու օրակարգերուն վրայ է միշտ Հայ Դատի հետապնդման կենսական հարցը, որ անանջատելի է Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատմութեան: Կաթողիկոսութիւնը նաեւ իր նիւթական համեստ պայմանները ի սպաս կը դնէ անժամանցելի Դատի անաջ տանելու ի խնդր, լուսարձակներէ հեռու գործին հաւատարմութիւնը ան առանց չեփորհարուածութեան աշխատելով ի սէր իր պաշտելի ժողովուրդի Սրբազան Դատին:

կան ծիրէն ներս, յատկապէս Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ: Այս Ս. Աթոռը պիտի շարունակէ գործել նոյն ոգիով ու ճամբով՝ դառնալով օգտակար այն բոլոր կառույցներուն ու նախաձեռնութիւններուն, որոնք մեր ժողովուրդին բռնարարուած իրաւունքները կը հետապնդեն:

Այս է մեր ուղին, որ ազգային - եկեղեցական կեանքի, հաւատքի, պատիւի հանձնարարութեան, գոհարբերութեան ու կենդանի նահատակութեան ճշմարիտ ուղին է, «սայր իր պաշտելի ժողովուրդի Սրբազան Դատին»:

Թիւ 2 - 3 Փետրուար - Մարտ 2001

որ իսրայէլ այս ձեւով թափ կու տայ յարուածութեան: Արաֆատի լիջեցուց, որ իսրայէլի բանակի հրամանատար գործադրող Մոֆաթ պատրաստած է հարիւրերեայ գիտնական ծրագիր մը, որ ըստ երեւոյթի արդէն իսկ գործադրութեան դրուած է:

Արաֆատի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնա ըսաւ, որ իսրայէլի կառավարութեան յետոյ միջոցառումը կը սպասուի խաղաղութեան վերջին առիթները:

Միւս կողմէ, Համասի ղեկավարներէն՝ Մահմուտ Չահար յայտնեց, որ իսրայէլեան յարձակումներն ու սպառնալիքները պիտի չազդեն իսլամական շարժումին ծրագրերը:

Ան աւելցուց, որ Համաս պիտի շարունակէ իսրայէլի դէմ ընդդիմութիւնը:

Արաֆատի ղեկավարած Ֆատիհ շարժումը Կազախի մէջ յայտարարեց, որ իսրայէլի սահմաններէ ներս յարձակումներ պիտի կատարէ, եթէ բանակը շարունակէ ռմբակոծումը պաղեստինեան քաղաքներուն: Ֆատիհ Կազախի պատասխանատու Ահմադ Հեյլէս ըսաւ, որ իսրայէլ պէտք է զիտակցի, թէ պաղեստինեան քաղաքները բաց թիրախներ չեն թշնամիին դիմաց եւ եթէ ռմբակոծումը շարունակուի, իսրայէլեան քաղաքներն ու անոնց բնակիչները թիրախ պիտի դառնան Ֆատիհի գինեակներուն:

Մինչ այդ, բախումներ շարունակուեցան Կազախի եւ Այսրյորդանանի մէջ: Ականատեսներ յայտնեցին, որ իսրայէլեան ուժեր երկու պատանիներ սպաննեցին Կազախի մէջ, քարեր արձակող ցուցարարներու հետ բախումի մը ընթացքին: Երրորդ պաղեստինցի մըն ալ սպաննուեցաւ Կազախի Ենցարիմ բնակեցման վայրին մօտ: Բանակը հաստատեց սպանութիւնը միայն երրորդ պաղեստինցիին:

Միւս կողմէ, իսրայէլ-սպաննուեցաւ Կազախի Ենցարիմ բնակեցման վայրին մօտ: Բանակը հաստատեց սպանութիւնը միայն երրորդ պաղեստինցիին:

Միւս կողմէ, իսրայէլ-սպաննուեցաւ Կազախի Ենցարիմ բնակեցման վայրին մօտ: Բանակը հաստատեց սպանութիւնը միայն երրորդ պաղեստինցիին:

Միւս կողմէ, իսրայէլ-սպաննուեցաւ Կազախի Ենցարիմ բնակեցման վայրին մօտ: Բանակը հաստատեց սպանութիւնը միայն երրորդ պաղեստինցիին:

## ՍՐԱՈՅ ՔԱՌԱՍՆԻՑ ...

Շարունակումս՝ 4րդ էջէն

եան: Մակի Միլոտիչեան արտասանեց Պարոյր Սեւակի «Անյոնի զանգակատուն»-էն «Լողանց ներման» հատուածը, Դանիէլ Վարուժանի «Հայր օրինակ» եւ Պարոյր Սեւակի «Լեւոն թիւ 5» բանաստեղծութիւնները:

Օրուան հանդիսավար, զպարգեան-երգիչ Գէորգ Պէպէճեան իր կարգին մեկնարանեց ժողովրդական եւ հայրենասիրական երգեր՝ ստեղծելով հայաշունչ մթնոլորտ:

Հանդիսութեան աւարտին սրբազան հայր բարկրկնուող անուանակոչութեան օտարազգիները մատաղղի, ու ըսաւ. «Այսպիսի կրկնութեան ճամբով է, որ մենք կը հաստատենք մեր ինքնութեան կամքը: Այս հանդիսաւոր արարողութիւնները, մեծ նուիրումով կատարուած մատաղի պատրաստութիւնը եւ յարակից ազգային աշխատանքները կրկնութիւններ չեն, այլ՝ ինքնութիւն: Հարկ է շարունակել պահպանելու համար մեր հայազորը ներկայութիւնը, մասնաւորապէս Պուրճ Համուտի մէջ, եւ պէտք է զարթոցեցնել հոնկէ հեռանալու անիմաստ տրամադրութիւնները»:

(ԱՐՄԵՆՓՐԷՍ)

## ԼՈՆՏՈՆԻ ՄԱՋԱԸԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, գրամանիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երէկ կեսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	0.8828
Ֆրանսական ֆրանք	7.427
Քանադական տոլար	1.5738
Գերմանական մարք	2.2145
Հոլանտական ֆլորին	2.4951
Չեխոսլովակական ֆրանք	1.7268
Պոլսկական ֆրանք	45.675
Իտալական լիր	2192.33
Ճափոնական ԵՆ	123.67
Շուեդական քրոն	10.386
Նորվեգիական քրոն	9.077
Դանիական քրոն	8.4498
Լեհ սթրիլին	1.427

## ԻՍԶԲԱՌ ԹԻԻ 4820

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԵՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵՍ
1. 1986ին Օսքարի արժանացած բեմադրիչը:	1. Թատրոնի խցիկ - Պարուտակ:
2. Առինքնել - Տեղական մակրայ:	2. Յունացի նման քաղաքահամ պտուղ:
3. Շաղկապ - Հնագանդ - Անձնական դերանուն:	3. Արական օտար անուն - ձաշէն առաջ կամ ետք հրամցուած թեթեւութիւն:
4. Իգական օտար անուն - Հրկիզում:	4. Բարձր - Ստեղծուած:
5. Անհաստատ ընթացիկ - Վահան Թէքէեանի երկերէն (հակ.):	5. Կայանալ - Փոքր:
6. Բարձունք - Եկամուտ:	6. Հորովակերտ մասնիկ - Ասպատակ:
7. Թաց - Գինդ:	7. Լիբանանի քաղաքներէն - Յուզական դերանուն:
8. Առնիքնել, նախածին:	8. Բազուկի ծայրամասերը - Երէ:
9. Հորովակերտ մասնիկ - Շաղկապ:	9. Այս կամ այն (իրը) - Ձայնակից տառեր:
10. Պինդ կամ անգագայ - Լաւ:	10. Թաքնախա, խաբեքայ:

ԹԻԻ 4819									
ԻՍԶԲԱՌԻՆ									
ԼՈՒԾՈՒՄԸ									
1	Շ	Լ	Ս	Ի	Տ	Ս	Ս	Ս	Ս
2	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

## ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամ-Գիշերու փակման սակագները հետեւեալ-Գերն էին երէկ.

Սուրիական թղթուկի	31.50 - 33.50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51.00	լ.ն.
Պահիլեյեան տինար	3990.00 - 4010.00	լ.ն.
Քուէթեան տինար	4886.42 - 4890.42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,24 - 2128,24	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408.43 - 410.42	լ.ն.
Սէլուսական դիալ	399.90 - 403.99	լ.ն.
Օմանեան դիալ	3900.00 - 3930.00	լ.ն.
Քաթարեան դիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կինի	400.72 - 402.72	լ.ն.
Անգլիական պերլին	2151,99 - 2155,84	լ.ն.
Գերմանական մարք	683,47 - 687,16	լ.ն.
Հոլանտական ֆլորին	607.65 - 611.24	լ.ն.
Ֆրանսական ֆրանք	202.74 - 206.77	լ.ն.
Չեխոսլովակական ֆրանք	873.32 - 877.18	լ.ն.
Պոլսկական ֆրանք	33.63 - 34.27	լ.ն.
Դանիական քրոն	230.22 - 250.12	լ.ն.
Սլովակական փէպէթա	8.02 - 9.04	լ.ն.
Թրքական լիր	0.0365 - 0.0370	լ.ն.
Կիպրական փաուստ	2318,79 - 2322,33	լ.ն.
Իտալական հապար լիր	688,15 - 692,38	լ.ն.
Ճափոնական հապար ԵՆ	12036 - 12040	լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2450 - 2452	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501.00 - 1514.00	լ.ն.
Քանադական տոլար	959.45 - 963.15	լ.ն.
Աւստրալիական տոլար	743.88 - 747.83	լ.ն.
Եւրո	1338,91 - 1342,93	լ.ն.

● ՈՍԿԻ		
Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	92,000 - 102,000	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	81,000 - 91,000	լ.ն.
Մեքսիկական փէսու	496,000 - 503,000	լ.ն.
Մէկ թիլոկրամ		
Ճոյլ ոսկի	13,250,000 - 13,750,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	259,05 - 263,35	Տ
Մէկ օնս արծաթ	4.38 - 4.42	Տ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ		
Գիճի Ա. Գըրում Գիճի Բ. Գըրում		
Ա. կարգի	6 00	6 00
Բ. կարգի	5 7/8	5 7/8